«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2023

ՆԱԽԱԲԱՆ

Վանաձորի պետական բշկական քոլեջի (այսուհետ՝ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումին համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվել և իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթական գործընթացի իրականացման վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

Բովանդակություն

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 9
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 10
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 10
ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 14
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 14
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 16
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 19
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 23
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 28
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 33
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 38
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 41
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 46
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 51
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 54
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 58
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 59
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 59
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 60
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 62
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 64
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 65
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 66

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) «Փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:Վանաձորի պետական բժշկական քոլեջը, իր առաքելությանը համապատասխան իրականացնում է միջին մասնագիտական կրթության հետևյալ ծրագրերը՝ «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ», «Ատամնատեխնիկական գործ», «Բուժական կոսմետոլոգիա», «Դեղագործություն»՝ հիմնական և միջնակարգ կրթության հիման վրա: Դրանք համահունչ են ՊԿՉ-երին և ՈԱՇ 5-րդ մակարդակի բնութագրիչներին:

Քոլեջում ստեղծված կառավարման համակարգը բավական թափանցիկ է, հնարավորություն է տալիս ներքին և արտաքին շահակիցներին մասնակցել որոշումների կայացմանը: Քոլեջի գրեթե բոլոր աշխատակիցները ոչ միայն տեղեկացված են քոլեջի գործունեության և նպատակների վերաբերյալ, այլև իրենց մասնակցությունն են բերում տարբեր խորհուրդների կազմում ընդգրկված լինելու և աշխատելու միջոցով: Քոլեջի առանձնահատկություններից է Մանկավարժական խորհրդի բավականին մանրամասն գրված արձանագրությունները, որոնք յուրահատուկ տարեգրություն են հանդիսանում քոլեջի գործունեությանը հետևելու համար:

Քոլեջում գործում է հաշվետվողականության համակարգ, սակայն ոչ բոլոր հաշվետվություններն ունեն վերլուծական բնույթ, ինչը կարող է ազդել որոշումների ճիշտ կայացման վրա: Այդ բացը կոմպենսացվում է պլանավորման իրականացումը մշտադիտարկող բազմազան մեխանիզմներով, որոնք ներդրվել են 2022 թվականից և հնարավորություն են տալիս քոլեջի ղեկավարությանը տեղեկատվություն ստանալ տարբեր աղբյուրներից:

Քոլեջում գրեթե բոլոր գործընթացները փաստաթղթավորված են: Կառավարման կառուցվածքը հստակ է: Քոլեջի աշխատանքը իրականացվում է երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորման հիման վրա: Ռազմավարության կատարողականը մշտադիտարկելու համար քոլեջի կառավարման մարմինները նախատեսում են ներդնել ԳԱՑ-երի համակարգ:

Քոլեջը որոշակի աշխատանք է իրականացրել որակի ապահովման համակարգի ներդրման ուղղությամբ 2022 թվականի վերջին, ստեղծելով որակի ապահովման կենսունակ մարմին, ներդնելով ռազմավարության իրագործումը գնահատող նոր մեխանիզմներ:

Կառավարման մարմինները կարևորում են որակի ապահովման համակարգի կարևորությունը քոլեջի համար, ինչը նպաստում է որակի ապահովման ուղղությամբ նախատեսվող գործընթացների իրականացմանը:

ՎՊԲՔ-ի մասնագիտությունները պահանջված են մարզի առողջապահական ոլորտում և նաև դրանով է բացատրվում քոլեջի լայն շփումները գործատուների հետ, որոնք

մասնակցում են տարբեր ձևաչափերով կազմակերպվող քննարկումներին, ընդգրկված են կառավարման խորհրդում, ավարտական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում:

Քոլեջը կրթական ծրագրերն իրականացնելիս առաջնորդվում է պետական կրթական չափորոշիչներով, սակայն չկան մշակված ՄԿԾ-ների մասնագրեր և վերջնարդյունքներ, ինչը կնպաստեր վերջնարդյունքահեն ուսումնառության արդյունավետության բարձրացմանը: Փորձագիտական խմբի դասալսումների, ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյուքնում հաստատվեց, որ քոլեջում ներդրված են բազմաթիվ ուսանողակենտրոն դասավանդման և ուսումնառության մեթոդներ, կիրառվում են դիագնոստիկ և ամփոփիչ գնահատման մեթոդներ, իսկ որոշ դասախոսներ իրականացնում են նաև ձևավորող գնահատման մեթոդը: Պրակտիկաների և գործնական պարապմունքների կազմակերպումը տարածաշրջանի բուժհաստատություններում, դեղատներում և կոսմետոլոգիական կենտրոններում հնարավորություն է ընձեռում ուսանողներին կիրառել քոլեջում ձեռք բերած կարողությունները աշխատանքային պայմաններում և ճանաչելի դառնալ ապագա գործատուների համար: Դրական գնահատելով այդ ամենը փորձագիտական խումբը կարծում է, որ ուսումնական գործընթացում չեք-լիստերի կիրառումը կարող է խթանել ուսանողների ինքնուրույն աշխատանքը և նպաստել ձեռք բերված գործնական կարողությունների կատարելագործմանը: Փորձաքննության ընթացքում պարզվեց, որ ուսանողների գործնական հմտությունները որոշ մասնագիտությունների դեպքում ստուգվում են նաև ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակ գործնական առաջադրանքների տրամադրման, մանիպուլյացիաների իրականացման միջոցով, սակայն անհրաժեշտ համարվեց այդ դրական փորձը տարածել բոլոր մասնագիտությունների վրա:

Քոլեջը կարևորելով դասախոսական անձնակազմի ներուժի հզորացումը պարբերաբար իրականացնում է վերապատրաստումների միջոցառումներ: Վերապատրաստվողները ստացած գիտելիքները փոխանցում են քոլեջի մյուս դասախոսներին: Այդ նպատակով կազմակերպվում են բաց դասեր, Մանկխորհրդում լսումներ են կազմակերպվում դրական փարձի արժևորմամբ և դրա տարածման վերաբերյալ խրախուսմամբ: Դասախոսների վերապատրաստումների մեծ մասը մեթոդական ուղղվածություն ունի, նկատվում է մասնագիտական վերապատրաստումների պակասը: Դա չի վերաբերվում միայն առողջապահության ոլորտում աշխատող դասախոսներին, որոնք մասնագիտական վերապատրաստումներ անցնում են: Քոլեջում առկա են դասախոսական կազմի աշխատաքների, նրանց կարիքների գնահատման, խրախուսման որոշակի մեխանիզմներ: Դրա հետ մեկտեղ քոլեջը դժվարություններ ունի երիտասարդ կադրերի ներգրավման ուղղությամբ:

Քոլեջի ղեկավարությունը մեծ ուշադրություն է դարձնում կրթական միջավայրի բարելավման, կրթական ծրագրերի որակյալ իրականացման համար ռեսուրսային բազայի ապահովման վրա: Դասասենյակների և լաբորատորիաների արդիականացումը ոչ միայն բարձրացնում է կրթական գործընթացի արդյունավետությունը, այլև նախապատրաստում ուսանողներին աշխատանքային միջավայրին: Քոլեջի կաբինետ-լաբորատորիաները հագեցած են մոդուլների և առարկաների ուսումնառության համար անհրաժեշտ

դիտողական պարագաներով, մուլյաժներով և սարքավորումներով: Դրա հետ մեկտեղ «Ատամնատեխնիկական գործ» և «Դեղագործություն» մասնագիտություններին վերաբերող մասնագիտական կաբինետներում նյութերի և գործիքների թարմացման և համալրման անհրաժեշտություն կա: Քոլեջը սեփական ռեսուրսներից բացի հնարավորություններ է ստեղծել ուսանողների համար օգտվելու գործընկեր կազմակերպությունների ռեսուրսներից: Քոլեջում կա հասանելի ինտերնետ կապ, ինչը հնարավորություն է տալիս դասախոսներին ուսումնական գործընթացը կազմակերպել նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ: Ինչպես վերը նշվեց՝ քոլեջի յուրահատկություններից է համաբուժարանի կամ «Ընտանեկան բժշկության կենտրոն»-ի առկայությունը: Դա հնարավորություն է տալիս համադրել ուսումնական գործընթացը աշխատանքային միջավայրի հետ: Կենտրոնում գրանցված ուսանողները և դասախոսները նաև ստանում են անվճար բժշկական օգնություն:

Ստեղծված կրթական միջավայրը քոլեջին հնարավորություն է տալիս շնորհել արժանահավատ որակավորումներ և որակյալ կադրեր պատրաստել առողջապահական հաստատությունների համար:

ՎՊԲՔ-ում առկա են ուսանողների ընդունելության և հավաքագրման մեխանիզմներ, ուսանողները ցանկացած ժամանակ կարող են դիմել վարչական անձնակազմին, առկա են խորհրդատվական ծառայություններ, իրականացվում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ, գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման մեխանիզմներ:

Քոլեջը կարևորում է հետազոտական աշխատանքներում ուսանողներին և դասախոսներին ընդգրկելու անհրաժեշտությունը, սակայն դեռևս չի հստակեցրել հետազոտության ոլորտում իր քաղաքականությունը: Քոլեջում կան հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման որոշ մեխանիզմներ, սակայն դրանք համընդհանուր բնույթ չեն կրում, ուսանողներին տրվող ոչ բոլոր առաջադրանքներում է առկա հետազոտական բաղադրիչը:

Քոլեջի գործունեությունը գնահատելիս փորձագիտական խումբը հաշվի է առել մի կարևոր առանձնահատկություն՝ ՎՊԲՔ-ին կից գործող «Ընտանեկան բժշկության կենտրոն» առկայությունը, որը նպաստում է ուսանողների կարողությունների զարգացմանը, քոլեջի ռեսուրսների համալրմանը, հասարակությանը մատուցվող բժշկական ծառայությունների մատուցման միջոցով հասարակական պատասխանատվության բարձրացմանը:

Քոլեջն իր գործունեության վերաբերյալ տեղեկատվություն է ապահովում ֆեյսբուքյան էջով, առցանց հարց ու պատասխանների կազմակերպմամբ, քոլեջ-գործատու սերտ կապի ապահովման միջոցով: Փորձագիտական խմբի կարծիքով դրան մեծապես կնպաստի նաև քոլեջի պաշտոնական կայքէջի գործարկումը: Քոլեջը տարիներ շարունակ հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման նպատակով հրատարակել է «Սպեղանի» պարբերաթերթը, սակայն չի իրականացնում կարճաժամկետ ծրագրեր, մինչդեռ դրանք կարող էին նպաստել առողջապահական խնդիրների շուրջ հատկապես գյուղական վայրերում իրազեկվածության բարձրացմանը:

Քոլեջը կարևորում է տեղական և միջազգային կրթական հաստատությունների հետ համագործակցության կատարելագործումը: Քոլեջն ունի միջազգայնացման բարձր հավակնություններ, սակայն չի մշակել բենչմարքինգի քաղաքականություն և միջազգայնացման ուղղությամբ դեռևս անում է առաջին քայլերը: Քոլեջն արդյունավետ համագործակցություն է ստեղծել տարածաշրջանի գործատուների հետ, ինչը կարևորվում է պրակտիկաների կազմակերպման և շրջանավարտների աշխատանքի տեղավորման տեսանկյունից: Դրական է, որ քոլեջը պլանավորում է բարձրացնել աշխատակիցների և ուսանողների շրջանում օտար լեզուների իմացության մակարդակը:

Արտաքին կապերի լայն շրջանակը և միջազգայնացման ուղղությամբ կատարված քայլերը նպաստում են քոլեջի զարգացմանը: Հետազոտության բաղադրիչի զարգացմանը էլ ավելի կնպաստի քոլեջի գործունեությանը բարելավմանը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. ՎՊԲՔ-ի ներքին և արտաքին շահակիցների կարծիքների հաշվառմամբ Ռազմավարական ծրագրի առկայությունը,
2. քոլեջում գործող հաշվետվողականության գործուն համակարգը,
3. ներքին շահակիցների ակտիվորեն մասնակցությունը կառավարման կոլեգիալ մարմինների աշխատանքին և որոշումների կայացման վրա ազդելու հնարավորությունը,
4. դասավանդման և ուսումնառության բազմազան և ուսանողակենտրոն մեթոդները և գործնական կարողություններ ձևավոնող առաջադրանքների առկայությունը,
5. քոլեջին կից գործող «Ընտանեկան բժշկության կենտրոն»-ի առկայությունը, որտեղ ուսանողները հանավորություն ունեն զարգացնելու իրենց գործնական կարողությունները,
6. առկա բազմազան ու արդյունավետ գործող գործընկերային կապերը, որի շնորհիվ ուսուցման նպատակով օգտագործվում են նաև գործատուների ռեսուրսները,
7. քոլեջի որակի ապահովման ներառական համակարգի ներդրումը, որը հիմքեր է ստեղծում որակի մշակույթի ձևավորման և տարածման համար,
8. դասախոսների համար իրականացվող վերապատրաստումների առկայությունը, որը նպաստում է նրանց կարողությունների զարգացմանը,
9. հասարակությանը գիտելիքների փոխանցման համար մեխանիզմների առկայությունը:

Հաստատության թույլ կողմերն են.

1. մարզի առողջապահական ոլորտի կարիքների քարտեզագրման բացակայությունը, որը կարող է խոչընդոտել թիրախավորված գործունեության իրականացմանը,
2. ոչ բոլոր կարճաժամկետ պլանների համապատասխանությունը ՌԾ-ին, ինչը կարող է վտանգել ՌԾ-ի հետևողական իրականացումը,
3. ոչ բոլոր հաշվետվությունների վերլուծական բնույթը,
4. բժշկական պրակտիկայում տարածված չեք-լիստեր չկիրառելը, ինչը կարող է խաթարել կարողությունների և հմտությունների լիարժեք ձևավորումը,

5. ոլորտի ճանաչված քոլեջների նմանատիպ ծրագրերի հետ բենչմարքինգի բացակայությունը,
6. դասախոսների և ուսանողների օտար լեզուների թույլ իմացությունը, ինչը կարող է խոչընդոտել միջազգայնացման գործընթացների արդյունավետ իրականացմանը,
7. արտաքին շահակիցների համար կազմակեպվող կարճաժամկետ ծրագրերի բացակայությունը,
8. դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների սակավությունը,
9. քոլեջում կրթության և հետազոտության կապի մեխանիզմների բացակայությունը, ինչը կարող է խոչընդոտել ուսանողների վերլուծական մտածողության զարգացմանը,
10. որակի ներքին ապահովման համակարգի մեխանիզմների չհամակարգվածությունը, ինչը կարող է հանգեցնել որակի ապահովման ուղղությամբ պլանավորված քայլերի ձախողմանը։

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Քարտեզագրել մարզի առողջապահության ոլորտի կարիքները՝ համադրելով դրանք քոլեջի ռազմավարական առաջնահերթություններին։

Կառավարումն ու վարչարարությունը

2. Համապատասխանեցնել կարճաժամկետ պլանավորումը ռազմավարական նպատակներին և խնդիրներին։
3. Բարելավել հաշվետվությունները՝ ապահովելով վերլուծական բաղադրիչը։
4. Բարելավել քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին ու ներքին գործոնների գնահատման մեխանիզմները։

Մասնագիտության կրթական ծրագրերը

5. Ստեղծել բոլոր ՄԿԾ-ների համար մասնագրեր՝ իրականացնելով քարտեզագրում ըստ մասնագիտությունների ակնկալվող վերջնարդյունքների։
6. Ուսումնառության գործընթացում կիրառել չեք-լիստեր։
7. Իրականացնել բարելավումներ ՄԿԾ-ների մշտադիտարկման արդյունքների հիման վրա։
8. Իրականացնել նմանատիպ կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն՝ լավագույն փորձը ներդնելու և ծրագրերը արդիականացնելու նպատակով։

Ուսանողները

9. Ներդնել ուսանողների վերլուծական կարողությունները զարգացնող մեխանիզմներ։

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

10. Օժանդակել դասախոսներին մասնագիտական վերապատրաստումներում ներգրավմանը։

11. Քայլեր ձեռնարկել երիտասարդ մասնագետներին խրախուսելու և քոլեջի դասավանդման գործընթացում ներգրավելու ուղղությամբ:

Հետազոտությունը և զարգացումը

12. Մշակել և ներդնել հետազոտական գործունեության և ուսումնառության կապի մեխանիզմներ՝ հստակեցնելով հետազոտության ոլորտում հավակնություններն ու ուղղությունները:
13. Ներդնել ուսանողներին և դասախոսներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու և խրախուսելու մեխանիզմներ:
14. Կատարել համեմատական վերլուծություն նմանատիպ քոլեջների հետ՝ հետազոտության լավագույն միջազգային փորձի ուսումնասիրման և տեղայնացման նպատակով:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

15. Ներդնել մեխանիզմներ ֆինանսական այլընտրանաքային միջոցների հայթայթման ուղղությամբ:

Հասարակական պատասխանատվությունը

16. Կազմակերպել կարճաժամկետ դասընթացներ՝ վերհանելով տարածաշրջանի կարիքները:
17. Ներդնել տեղեկատվության տրամադրման, հասանելիության, թափանցիկության և հետադարձ կապի արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

18. Սահմանել միջազգայնացման ուղղությամբ իրատեսական նպատակներ և խնդիրներ հստակ գնահատելով քոլեջի հնարավորությունները և ռեսուրսները:
19. Ընդլայնել դասախոսների և սովորողների օտար լեզուների իմացության մակարդակը բարձրացնող մեխանիզմներ:

Որակի ներքին ապահովման համակարգը

20. Համակարգել որակի ապահովման մեխանիզմները կանոնակարգելով դրանց կիրառման պարբերականությունը:
21. Ստեղծել տվյալների բազա համապատասխանացնելով այն ներդրվող ՌԾ ԳԱՑ-երին:

Լիլիթ Զաքարյան
Փորձագիտական խմբի ղեկավար

12 հունվարի, 2024 թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Վանաձոր պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[1] կողմից.

1. **Լիլիթ Զաքարյան՝** Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Որակի գնահատման և ապահովման կենտրոնի տնօրեն, փորձագիտական խմբի ղեկավար,
2. **Մերի Սարգսյան՝** Երևանի հենակետային բժշկական քոլեջի տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքների գծով, փորձագիտական խմբի անդամ,
3. **Լիլիթ Աբելյան՝** Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի պատասխանատու, փորձագիտական խմբի անդամ,
4. **Էդիտա Քասինյան՝** Հայաստանի ազգային ագրարային համալսարանի «Ագրոբիզնես և ֆինանսներ» մասնագիտության ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ տնօրենի օգնական **Լիանա Ալավերդյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ՎՊԲՔ-ը 16.03.2023թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո ՎՊԲՔ-ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատության առաջին անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու հանգամանքը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման սկզբնական փուլում լինելը՝ ՈԱԱԿ–ը առցանց աշխատաժողովներ է իրականացրել հավատարմագրվող ՄԿՈ-ների հաստատությունների հետ: Աշխատաժողովները նպատակ են ունեցել նախապատրաստել քոլեջներին հավատարմագրման գործընթացի

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

կազմակերպման փուլերին: Աշխատաժողովներին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները, հավատարմագրման դիմելու համար լրացվող էլեկտրոնային հարցաշարը, ինքնավերլուծության ու SWOT վերլուծության իրականացման առանձնահատկությունները: Ուսումնական հաստատությունն իրականացրել է փորձնական SWOT վերլուծություն, որը քննարկվել է ՈԱԱԿ աշխատակիցների հետ:

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: Համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ–ի պահանջներին ստուգելու նպատակով: Ինքնավերլուծությունը ՈԱԱԿ է ներկայացվել 10.05.2023թ.:

Նախապատրաստական փուլ

Վանաձորի պետական բժշկական քոլեջի կողմից ինստիտուցիոնալ կարողությունների զեկույցը և կից փաստաթղթերը ներկայացնելուց հետո ՈԱԱԿ համակարգողն ուսումնասիրել է դրանք՝ ՈԱԱԿ-ի պահանաջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում,
4. նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում՝ ըստ ձևաչափի պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակարգողը կազմել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը[2]: Առաջնորդվելով ՀՀ Մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, զուգահեռ հանդիպումներ և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել ընտրված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն ուսումնասիրել են ուսանողներին տրվող հանձնարարականները, իրականացրել են դասալսումներ՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը:

Նախանական այց

2023թ. նոյեմբերի 16-ին առցանց հանդիպում է տեղի ունեցել ՎՊԲՔ-ի ղեկավար կազմի հետ: Հանդիպումներին ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը:

Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2023թ. հոկտեմբեի 31-ից նոյեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցի ընթացքում փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողն այցելել են քոլեջ, դիտարկել քոլեջի ենթակառուցվածքներն ու ռեսուրսները[3], իրականացրել դասալսումներ: Այնուհետև փորձագետներն ու համակարգողն ունեցել են փակ հանդիպում: Հանդիպման նպատակն էր դուրս բերել քոլեջի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, հստակեցնել թիրախային խմբերին տրվող հարցադրումները, քննարկել իրականացվող հանդիպումների ընթացակարգը և հետագա քայլերը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է նաև փաստաթղթերի ուսումնասիրություն[4]:

Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Փորձագիտական խմբի անդամների հաստատումից հետո նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին: Նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին՝ 26.12.2023թ.: Նախնական զեկույցի վերաբերյալ Վանաձորի պետական բժշկական քոլեջը դիտարկումներ չի ներկայացրել: Փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 12.01.2024թ.:



Լիանա Ալավերդյան

Փորձագիտական խմբի համակարգող

12 հունվարի, 2024 թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- **Պատմություն**. Վանաձորի պետական բժշկական քոլեջը հիմնադրվել է 1936թ. և կոչվել է Կիրովականի մանկաբարձական դպրոց, 1947 թ.՝ Հայկական ԽՍՀ առողջապահության մինիստրության Կիրովականի բուժքույրական տեխնիկում, 1955-1956թթ.՝ Կիրովականի բժշկական ուսումնարան, 1970թ. դարձել է Հայկական ԽՍՀ առողջապահության մինիստրության Դիլիջանի բժշկական ուսումնարանի մասնաճյուղ, 1972թ. վերակազմակերպվել է Հայկական ԽՍՀ առողջապահության նախարարության Կիրովականի բժշկական ուսումնարան, 2004թ.՝ «Վանաձորի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ: Քոլեջն իր առաքելությունն է համարում առողջապահական ոլորտում որակյալ կադրերի պատրաստումը, կադրերի մրցունակության բարձրացումը, դասախոսական կազմի կարողությունների զարգացումը:
- **Կրթություն.** Քոլեջն իրականացնում է միջին մասնագիտական կրթական հետևյալ ծրագրերը.
    - Քույրական գործ,
    - Մանկաբարձական գործ,
    - Ատամնատեխնիկական գործ,
    - Դեղագործություն,
    - Բուժական կոսմետոլոգիա՝ հիմնական և միջնակարգ կրթության հիմքով:

  Ուսումնառությունը կատարվում է պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսումնական պլաններով, մոդուլային և առարկայական ծրագրերով: Քոլեջում ընդունելությունը կատարվում է ՀՀ ԿԳՄՄՆ կողմից հաստատված կարգով՝ անվճար և վճարովի հիմունքներով: Կրթական ծրագրերը հիմնականում համահունչ են մարզի առողջապահական կարիքներին:
- **Հետազոտություն/ստեղծագործ մտածելակերպի ձևավորում.** ՎՊԲՔ-ում առկա են հետազատական գործունեության նախադրյալներ, կարևորվում է ուսանողների վերլուծական կարողությունների ձևավորումը: Կրթության բովանդակության արդիականության ապահովման, ուսանողների մոտ քննադատական մտածողության զարգացման նպատակով քոլեջի 2023-2028թթ. Զարգացման ծրագրում ներառվել է նաև «Հետազոտություն և զարգացում, արտաքին կապեր եվ միջազգայնացում» ռազմավարական ուղղությունը:
- **Արտաքին կապեր.** Քոլեջի հիմնական նպատակներից են միջազգային կապերի հաստատումը և համագործակցությունը այլ հաստատությունների հետ, կրթության բարեփոխումների ապահովումը՝ հիմնված արտասահմանյան երկրների առաջավոր փորձի վրա և միջազգային նորմերին և չափանիշներին համապատասխան որակյալ մասնագետների պատրաստումը: ՎՊԲՔ-ի ռազմավարական նպատակներում նախատեսվում է առաջիկայում ավելացնել համագործակցության շրջանակը և ամրապնդել առկա համագործակցությունները՝ կատարել փոխադարձ

այցելություններ, առաջավոր փորձի փոխանակման՝ գիտելիքների խորացման նպատակով, զարգացնել հեռահաղորդակցական կապը:

- **Որակի ապահովում.** Ընդունելով որակի ապահովման մարտահրավերները, քոլեջը կարևորել է որակի ապահովման և որակի մշակույթի տարածման դերը՝ ստեղծելով իրավական կարգավորող փաստաթղթեր, որոնք ապահովել են գործընթացի կանոնակարգումն ու իրականացումը, ներդնելով կարիքների վերհանման, ՈԱ գործընթացներում շահակիցների ներգրավման, որակի ապահովման մշակույթի տարածման գործուն մեխանիզմներ: Կրթության կազմակերպման նոր համակարգին անցումը ենթադրում է կրթության որակի ապահովման համար նոր մոտեցումներ, սկզբունքներ և չափանիշներ, ուստի 2023թ. նոր ռազմավարության մեջ Որակի ապահովումը կրթական գործունեության իրականացման հիմնարար նպատակ սահմանվեց: ՎՊԲՔ-ի 2023-2028թթ. զարգացման ծրագրում ներառված առաջնահերթ նպատակներից է ներդնել և շարունակաբար կատարելագործել որակի ապահովման մշակույթը քոլեջում:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

«Վանաձորի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը գործում է ըստ 2023-2028 թթ. ռազմավարական ծրագրի, որտեղ ներկայացված են քոլեջի առաքելությունը, տեսլականը, հիմնարար արժեքները, ներքին և արտաքին միջավայրերի վերլուծությունը, քոլեջի ռազմավարական նպատակները, խնդիրները և իրագործման միջոցառումները, ակնկալվող արդյունքներ և ռազմավարական ծրագրի իրագործումը:

Քոլեջի նպատակներն ու խնդիրները արտացոլված են կանոնադրության, ՎՊԲՔ-ի 2018-2023 թթ. և ՎՊԲՔ 2023-2028թթ. զարգացման ծրագրերում: Փորձագիտական ուսումնասիրության համաձայն՝ քոլեջի սահմանած առաքելությունն ու կանոնադրությամբ սահմանած նպատակները համահունչ են: Քոլեջն իրականացրել է 2018-2023 թթ. զարգացման ծրագրի կատարողականի գնահատում և մշակել երկրորդ՝ 2023-2028 թվականների համար զարգացման ծրագիր, որում առաքելությունը փոփոխվել է ներառելով նոր շեշտադրումներ:

ՄՈՒՀ-ի 2018-2023 թվականների ՌԾ-ում սահմանված էր հետևյալ առաքելությունը. հանրապետության առողջապահական ոլորտի համար ՊԿՉ-ին համապատասխան միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստումը, նրանց մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումն երկրի սոցիալ- տնտեսական զարգացման պահանջներին, ազգային և համամարդկային ոգով դաստիարակված անձի և քաղաքացու համակողմանի ձևավորումը:

ՄՈՒՀ-ի 2023-2028 թվականների ՌԾ-ում առաքելությունը փոխվել է և սահմանվել հետևյալ կերպ՝

- գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու նպատակով, դասախոսական ներուժի զարգացումը՝ նրանց մասնագիտական, օտար լեզուների իմացության, համակարգչային հմտությունների կատարելագործման և նորարարական մեթոդների կիրառման ուղղությամբ,
- այնպիսի կրթության և ուսուցման իրականացում, որը կնպաստի գիտելիքի որակի և վարկանիշի բարձրացմանը, արդի աշխատաշուկայի պահանջներին բավարարող մասնագիտական խոր պատրաստվածություն ունեցող, արհեստավարժ, մրցունակ, զարգացած միջին բուժմասնագետների պատրաստմանը, բուժքույրերի, մանկաբարձների, ատամնատեխնիկների, դեղագործների և կոսմետոլոգների դասական մոդելի ձևավորմանը, նրանց

գործելակերպն ու կարողությունները ազգաբնակչության շահերին համապատասխանեցմանը:

Նոր ռազմավարական ծրագրում հստակ ներկայացված է քոլեջի տեսլականը, համաձայն որի քոլեջը ձգտում է դառնալ հաստատություն, որը՝

- կունենա կրթության որակի անընդհատ բարելավմանն ու միջազգայնացմանն ուղղված արդյունավետ կառավարում և վարչարարություն,
- կունենա նորարարության, կրթական նորագույն տեխնոլոգիաների, ուսումնառության և դասավանդման նորագույն մեթոդների վրա հիմնված մրցունակ կրթական ծրագրեր,
- կկրթի միջազգային չափանիշներին համապատասխան բանիմաց, բարձրորակ, հմուտ և մարդասեր մասնագետներ,
- կլինի առաջատարներից մեկը՝ մատուցվող կրթական ծառայություններում,
- կավելացնի հետազոտական բաղադրիչը միջին մասնագիտական կրթական ծրագրերում:

Նոր ռազմավարություն մշակելու նպատակով կարիքների վերհանմամբ զբաղվել է նաև Որակի ապահովման հանձնաժողովը, որի կազմում ներառված են ակտիվ ուսանողներ, Որակի դեսպաններ (ուսանողներից ընտրված որակի ապահովման աջակիցներ), դասախոսներ, ծնողներ և գործատուներ:

2023-2028 թթ. Ռազմավարության իրականացման համար քոլեջը ստեղծել է պլան-ժամանակացույց, որտեղ նշված են պատասխանատուները, ժամկետները և վերջնարդյունքները: Պլան-ժամանակացույցն իրենից ներկայացնում է նպատակներին հասնելու ճանապարհային քարտեզ: Թեև պլան-ժամանակացույցում գնահատման առանցքային ցուցիչները (ԳԱՑ) ներառված չեն, այնուամենայնիվ որակի ապահովման կենտրոնի ռազմավարության մեջ նշվում է, որ նախատեսվում է ԳԱՑ-եր սահմանել ռազմավարության իրագործման նպատակով:

Հետևելով առաքելության մեջ նշված ազգային և համամարդկային ոգով դաստիարակված անձի և քաղաքացու համակողմանի ձևավորման նպատակին, Քոլեջը տարաբնույթ արտալսարանային և լսարանային միջոցառումներ է անցկացրել՝ կլոր սեղաններ տարբեր թեմաներով, բաց դասեր նվիրված հայ ժողովրդի պատմության հերոսական էջերին, այցեր Ղարաքիլիսայի ճակատամարտի հուշակոթողին և այլն:

Քոլեջի շահակիցներն են ՀՀ կառավարությունը, ԿԳՄՍ նախարարությունը, ուսանողները, դիմորդները, շրջանավարտները, դասավանդող կազմը, ուսումնաօժանդակ կազմը, գործատուները և այլք: Քոլեջում իրականացվել են հարցումներ՝ ուսանողների, դասախոսների, շրջանավարտների շրջանում՝ կրթական գործընթացների արդյունավետությունը պարզելու, ինչպես նաև կարիքների բացահայտման նպատակով: Ներքին շահակիցները, ընդգրկված լինելով կառավարման մարմիններում իրենց կարիքները հնչեցրել են նաև այդ օղակներում: Արտաքին շահակիցները, մասնավորապես գործատուները, նույնպես ընդգրկված են քոլեջի կառավարման գործընթացներում, ինչպես նաև պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմում: Քոլեջն ակտիվ համագործակցում է սովորողների ծնողների հետ:

ՎՊԲՔ-ում ՌԾ մշտադիտարկման մեխանիզմները մինչ 2022 թ. համակարգված բնույթ չեն կրել: 2022 թ. վերջին ՈԱ նոր պատասխանատուների առաջին քայլերից է եղել

2018-2023 թթ. զարգացման ծրագրի կատարողականի գնահատումը, շահակիցների հետ քննարկումների և հանդիպումների անցկացումը: Այդ քննարկումները նպաստել են բացթողումների հաշվառմանը և 2023-2028 թթ. նոր զարգացման ռազմավարական ծրագրի մշակմանը: Աշխատանքի արդյունավետությունը չափելի դարձնելու նպատակով պլանավորվել է ներդնել ԳԱՑ-եր, որոնք ներառում են ուսանողության և շրջանավարտների, դասախոսական կազմի և վարչական աշխատողների վիճակագրական տվյալները, ֆինանսական ռեսուրսներին վերաբերվող ցուցանիշները և այլն: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ 2022 թ. վերջին ստեղծվել են ՌԾ մշտադիտարկման և գնահատման նոր մեխանիզմներ և գործիքներ (պլան-ժամանակացույց, հարցումներ, ֆոկուս-խմբեր):

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջի 2018-2023 զարգացման ծրագրի իրականացումը նպաստել է քոլեջի առաքելության և նպատակների իրագործմանը: Գովելի է, որ հավատարիմ մնալով իր առաքելությանը Քոլեջը միջին մասնագիտական կրթությամբ կադրեր է պատրաստում առողջապահության ոլորտի համար, որոնք մեծամասամբ համապատասխանում են մարզի առողջապահական կարիքներին: Փորձագիտական խումբը կարևորում է գործատուների կարիքների քարտեզագրումը, ինչը կհանգեցնի քոլեջի ռազմավարական առաջնահերթությունների հստակեցմանը: Դրական է նաև, որ քոլեջն իրականացրել է նախորդ զարգացման ծրագրի կատարողականի գնահատում և նոր՝ 2023-2028 թթ. ռազմավարությունը մշակել նախորդ ծրագրի բացթողումների հաշվառմամբ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ռազմավարական նպատակների իրականացման նպատակով մշակվել է պլան-ժամանակացույց, որն արտահայտում է քոլեջի նպատակադրումների իրականացման գործողությունները, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ գործողությունների համար գնահատման ցուցիչների սահմանումը կնպաստի ՌԾ ընթացիկ գնահատմանը և խնդիրների դուրսբերմանը:

Դրական է համարվում, որ քոլեջում ստեղծված կառավարման համակարգը հնարավորություն է տալիս ներքին և արտաքին շահակիցներին մասնակցել առաքելության և նպատակների ձևակերպմանը և իրականացմանը, ինչը նպատում է շահակիցների տեղեկացվածությանը քոլեջի ծրագրերի, մոտավոր և հեռանկարային նպատակների վերաբերյալ: Գովելի է, որ 2022 թ. ներդրվել են ՌԾ իրագործումը գնահատող նոր մեխանիզմներ՝ պլան-ժամանակացույց, հարցումներ, ֆոկուս-խմբեր և այլն, որոնք հնարավորություն կտան քոլեջում ստեղծված հաշվետվողականության մեխանիմները վերածել ՌԾ-ի գնահատման գործիքի:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՎՊԲՔ-ին և արտաքին շահակիցների կարծիքների հաշվառմամբ է մշակել իր առաքելությունն ու նպատակները արտահայտող ռազմավարական ծրագրերը, վարած քաղաքականությունն ու իրականացրած գործունեությունը համապատասխանում են դրված նպատակներին, 2022 թ. հարստացրել է ՌԾ կատարողականի գնահատումը նոր մեխանիզմներով, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է Չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Վանաձորի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր:

ՎՊԲՔ-ի քոլեջի կառավարումն իրականացվում է ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ:

Հաստատության կառավարման մարմիններն են քոլեջի խորհուրդը և տնօրենը: Կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգվում է քոլեջի կանոնադրությամբ: Քոլեջի կառավարումը կանոնակարգվում է նաև հետևյալ կարգերով՝ Ուսումնական մասի կանոնակարգ, Ամբիոնների կանոնակարգ, Հաշվապահական հաշվառման վարման քաղաքականությունը, Տնօրենի մրցույթի կանոնակարգ, Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման, բողոքարկման համակարգի կանոնակարգ, Կարիերայի ուղղորդման և աջակցման կանոնակարգ և այլն:

Քոլեջի խորհուրդը, որը կառավարման բարձրագույն կոլեգիալ մարմինն է, սահմանում է տնօրենի ընտրության մրցութային ընթացակարգը, կազմակերպում և անցկացնում է մրցույթը, հաստատում է Ռազմավարական ծրագիրը, իրականացնում տնօրենի գործունեության ընթացիկ վերահսկողությունը, քննարկում և հաստատում է նրա հաշվետվությունները, հաստատում քոլեջի ստորաբաժանումների կանոնակարգերը և ներքին կարգապահական կանոնները, քոլեջի գործունեությունը կանոնակարգող այլ փաստաթղթեր: Քոլեջի խորհրդի կազմում ներգրավված է 11 անդամ՝ լիազոր մարմին (20%), սոցիալական գործընկերներ (25%), ուսանողական անձնակազմ (25%), դասախոսական անձնակազմ (20%) և հիմնադրի ներկայացուցիչ (10%): Քոլեջի խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ: Նիստերին, ըստ անհրաժեշտության, խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են հրավիրվել նաև այլ ուսանողներ, քոլեջի աշխատողներ վարչական և դասախոսական կազմից, ծնողներ:

Քոլեջի տնօրենը ղեկավարում է քոլեջի ընթացիկ գործունեությունը: Տնօրենն ունի ուսումնական, կազմակերպչական-դաստիարակչական, տնտեսական աշխատանքների գծով տեղակալներ: Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի ենթակայության ներքո գործում է բաժնի վարիչը, պրակտիկայի ղեկավարը, ամբիոնների վարիչները, կաբինետիների վարիչները, իսկ կազմակերպչական-դաստիարակչական աշխտանանքերի գծով տնօրենի տեղակալի ենթակայության ներքո՝ կուրսղեկները: Քոլեջում գործում է 3 ամբիոն՝ ընդհանուր բնագիտության, ատամնատեխնիկական գործի և դեղագործության ու ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտության:

Քոլեջում գործում են հետևյալ խորհուրդները. մանկավարժական (բոլոր դասախոսները և 5 ուսանող), տնօրինական (11 վարչական աշխատակից և դասախոս, 3 ուսանող), մասնագիտական կողմնորոշման խորհուրդ (5 աշխատակից), գրադարանային խորհուրդ (6 անդամ), ուսանողական խորհուրդ (10 ուսանող), մեթոդխորհուրդ (4 աշխատակից), ներքոլեջային վերահսկողության խորհուրդ (7 աշխատակից), գիտամեթոդական (5 աշխատակից), որոնց շնորհիվ ներքին շահակիցները լայնորեն ընդգրկվում են որոշումների կայացման գործընթացին: Ստեղծել է նաև որակի ապահովման հանձնաժողով, որի մեջ ընդգրկված են ներքին շահակիցներ: Հանձնաժողովը քննակում է ՎՊԲՔ-ի ՈԱ քաղաքանությանը վերաբերվող հարցերը, առաջարկներ անում կրթական ծրագրերի բարելավման ուղղությամբ, աջակցում քոլեջի գործունեության մշտադիտարկմանը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաստատությունում որոշում կայացնող օղակները հիերարխիկ կապերով փոխկապակցված են: Քոլեջում հիմնականում մշակված են հաստիքների գործառույթները սահմանող պաշտոնի անձնագրեր:

Կառավարման միանձյա կառավարումը զուգորդվում է կոլեգիալ մարմինների աշխատանքով: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ներքին շահակիցները ներգրավված են կառավարման խորհուրդներում և ակտիվորեն մասնակցում են խնդիրների քննարկմանը, բարձրացմանը և լուծման ուղիների առաջարկմանը: Մանկավարժական խորհրդին անդամակցում են քոլեջի բոլոր դասախոսները, ինչի շնորհիվ էլ ներքին շահակիցները տեղեկանում են քոլեջում ընթացող բոլոր գործընթացներին: Մանկավարժական խորհրդի նիստերը արձանագրվում են:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի դասախոսական կազմը մասնակցում է ամբիոնների նիստերին, քննարկում տարաբնույթ հարցեր և հանդես գալիս առաջարկություններով: Մասնավորապես, Կորոնավիրուսային համաճարակի ընթացքում դասախոսները հարց են բարձրացրել առցանց կազմակերպվող դասընթացների ժամանակ տեխնիկական հարցերում աջակցություն ստանալու նպատակով և նրանց օգնելու համար դասախոսներին կցվել է օպերատոր: Ուսանողները մասնակցում են որոշումների կայացմանը, ինչպես անդամակցելով որոշում կայացնող կոլեգիալ մարմինների աշխատանքին, այնպես էլ Ուսանողական խորհրդի միջնորդությամբ:

Քոլեջը որպես երկարաժամկետ պլանավորում դիտարկում է ռազմավարական ծրագիրը, որի յուրաքանչյուր տարվա գնահատումը կատարվում է քոլեջի խորհրդի կողմից՝ տնօրենի հաշվետվության հիման վրա: 2022 թ. վերջին գնահատվել է 2018-2023 թթ. ՌԾ-ի կատարողականը և հայտնաբերված բացթողումները (պլան-ժամանակացույցի, ԳԱՑ-երի բացակայություն և այլն) հաշվի են առնվել նոր մշակվող 2023-2028 թթ. ռազմավարության մեջ: Բոլոր ստորաբաժանումները կազմում են և ներկայացնում են տարեկան պլանները, որպես կարճաժամկետ պլանավորումներ: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ պլանների մի մասը տարեց տարի կրկնվում է և դրանք չեն բխել ՌԾ-ից: Այդ պլանների կատարողականների հաշվետվությունները ներկայացվում են յուրաքանչյուր կիսամյակ և տարվա ավարտին, իսկ կարիերայի պատասխանատուն՝ երեք ամիսը մեկ՝ տնօրենին և լիազոր մարմնին: Հաշվետվությունների մեծ մասը կատարողականի վերաբերյալ է և վերլուծական բնույթ չունի:

Մեթոդխորհրդի և ֆինանսական հաշվետվությունները քննարկվում են Մանկավարժական խորհրդի նիստում կիսամյակի ավարտին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախատեսվում է պլան-ժամանակացույցի մշակումից հետո ապահովել կարճաժամկետ պլանների համահունչությունը ՌԾ նպատակներին և խնդիրներին: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ քոլեջը պարբերաբար կազմակերպում է կլոր սեղան քննարկումներ, կոլեգիալ մարմինների մասնակցությամբ նիստեր, որտեղ քննարկվում են քոլեջի գործունեության վրա ազդող գործոնները, սակայն բացի նիստերի արձանագրություններից, այլ փաստաթղթավորված աղբյուրներ չկան, օրինակ համապարփակ զեկույցներ: Քոլեջի խորհրդի և Մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թեև քննարկումներ եղել են, այնուամենայնիվ դրանց ձևաչափը խորքային վերլուծություններ անելու հնարավորություն չի տալիս: Մասնավորապես՝ քննարկվել է միգրացիայի հետևանքով դիմորդների պակասի հարցը և որոշվել ակտիվացնել հավաքագրման աշխատանքները, մեկնելով Լոռու մարզի տարբեր համայքների դպրոցներ:

Փաստաթղթային հենքի ուսումնասիրություններն ու վերլուծությունները ցույց տվեցին, որ տարեցտարի բարելավվել են ստորաբաժանումների տարեկան պլանների հաստատման, դրանց իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման գործընթացները: Հատկապես վերջին 3 տարիների հաշվետվությունները մանրամասնորեն քննարկվում և գնահատվում են Մանկխորհրդի կողմից:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՊԻԳԲ շրջափուլը դեռևս ամբողջությամբ ներդրված չէ, սակայն Որակի ներքին ապահովման քաղաքականության մեջ և ձեռնարկում հիմնավորվում են բոլոր գործընթացները ՊԻԳԲ շրջափուլով կազմակերպելու անհրաժեշտությունը:

Քոլեջում ներդրված են ՄԿԾ իրականացման գնահատման բազմազան մեխանիզմներ՝ դասալսումներ, բաց դասեր՝ լավագույն փորձի ներկայացմամբ, մատյաններում լրացումների և ուսումնամեթոդական փաթեթների ստուգման, ուսանողների, շրջանավարտների բավարարավածության հարցումներ և այլն: Հավաքագրված տեղեկատվությունը քննարկվում է Մանկխորհրդի նիստերին, արվում են առաջարկներ և տրվում գնահատականներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցումների մեխանիզմները նոր են ներդրվում և առանձին վերլուծություններ դեռևս չկան, սակայն դրանք պլանավորված են կրթության որակի պատասխանատուի (ԿՈՊ) կողմից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում կառավարման գործընթացները համակարգված են, իսկ որոշումների կայացմանը մասնակցում են ներքին ու արտաքին շահակիցներ, որը նպաստում է քոլեջում իրականացվող տարբեր գործընթացների համահունչ զարգացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ կառավարման կառուցվածքը գործում է հիերարխիկ կապերով, գովելի է նաև, որ քոլեջն ունի հստակ սահմանված պաշտոնների նկարագրեր, որոնք հստակեցնում են աշխատակազմի գործառույթները: Սա նպաստում է հաստատության ներսում դերերի և պարտականությունների հստակ բաշխմանը: Ռազմավարական պլանավորման, կատարողականի գնահատման և «ներքևից վեր» մոտեցման համադրությունը խթանում է շարունակական բարելավման մշակույթը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում գործում են երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորումներ, ինչը հնարավորություն է տալիս արդունավետորեն լուծել մարտահրավերները, դիտարկել հնարավորությունները և զարգանալ գերակա նպատակներին համահունչ:

Փորձագիտական խումբը դրական է գնահտում, որ քոլեջը գիտակցում է ԳԱՑ-եր մշակելու կանորությունը և գտնում է, որ գործընթացների գնահատման հստակությունն ապահովելու համար անհրաժեշտ է ներդնել ԳԱՑ-երի համակարգը:

Չնայած քոլեջը ներդրել է հաշվետվողականության արդյունավետ համակարգ, փորձագիտական խումբը գտնում է, որ վերլուծական բաղադրիչի առկայությունը հնարավորություն կտա ավելի համապարփակ պատկերացում կազմել հաստատության գործունեության մասին: Վերլուծական բաղադրիչի ինտեգրումը հնարավորություն կտա քոլեջին բացահայտել դրական փորձը և վերհանել բարելավման ենթակա ուղղությունները:

Դրական է, որ քոլեջը փորձում է տարբեր քննարկումների միջոցով դուրս բերել արտաքին գործոնները, որոնք ազդում են քոլեջի վրա, միևնույն ժամանակ նշում, որ դուրս բերված գործոնների մասին ամփոփ վերլուծությունները հիմք կարող են դառնալ որոշումների կայացման համար:

Թեև ՊԻԳԲ շրջափուլը քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարության մեջ դեռևս ամբողջապես ներդրված չէ, այնուամենայնիվ դրական է, որ կան պլանավորումը և իրականացումը մշտադիտարկող բազմազան մեխանիզմներ: Փորձագիտական խումբը դրական է համարում ՈԱ քաղաքականության և ձեռնարկի մեջ այդ ուղղությամբ ներդրված դրույթները: Դրական է նաև, որ գնահատման մեխանիզմները և գործիքները 2022 թ. վերջից սկսել են բազմազանեցվել, ինչը հնարավորություն կտա քոլեջում ընթացող գործընթացների մասին տեղեկատվություն ստանալ տարբեր աղբյուրներից:

Դրական է, որ քոլեջում կայուն պարբերականությամբ հավաքագրվում են մասնագիտությունների կրթական ծրագրերի վերաբերյալ տվյալներ և պլանավորվում են վերլուծություններ: Այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմների ներդնումը կնպաստի արտաքին շահակիցների շրջանում քոլեջի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՎՊԲՔ-ի կառավարման մարմինների, վարչական կառույցների գործունեությունը կանոնակարգված է, դասախոսներն ու ուսանողները հնարավորություն ունեն ազդելու որոշումների կայացման վրա, առկա են երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորման մեխանիզմներ, գործում է հաշվետվողականության գործուն համակարգ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է Չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Վանաձորի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Վանաձորի պետական բժշկական քոլեջն իրականացնում է միջին մասնագիտական կրթություն «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ», «Ատամնատեխնիկական գործ», «Բուժական կոսմետոլոգիա», «Դեղագործություն» մասնագիտություններով հիմնական և միջնակարգ կրթության հիման վրա իր առաքելությանը, ռազմավարական հիմնական ուղղություններին և ՈԱՇ 5-րդ մակարդակին համահունչ: Մասնագիտական կրթական ծրագրերի համար քոլեջն առաջնորդվում է պետական կրթական չափորոշիչներով: Հարկ է նշել, որ կրթական ծրագրերի համար մշակված չեն մասնագրեր: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջը բոլոր մասնագիտությունների շրջանակներում որոշ ուսումնառության արդյունքների համար ներկայացրել է դասավանդման և ուսումնառության մեթոդներ և մշակել համահունչության քարտեզագրումներ, սակայն ներկայացված քարտեզագրումների մեջ ներառված չեն դասավանդվող բոլոր մոդուլները:

Կրթական ծրագրերն իրականացվում են քոլեջի տնօրենի կողմից հաստատված ուսումնական պլանների համաձայն: Ուսումնական պլաններում առարկաների և մոդուլների դասաժամերի բաշխման ժամանակ առաջնահերթությունը տրվել է գործնական պարապմունքներին, պահպանվել են առարկաների տրամաբանական հաջորդականությունը և մոդուլների մուտքային պահանջները: Կրթական ծրագրերում ուսումնառվում են հետևյալ ընտրովի մոդուլները.

- «Քույրական գործ» կրթական ծրագրում՝ «Հիվանդի նախապատրաստումը գործիքային հետազոտության»,
- «Մանկաբարձական գործ» կրթական ծրագրում՝ «Առողջ ընտանիք, ընտանիքի պլանավորում»,
- «Բուժական կոսմետոլոգիա» կրթական ծրագրում՝ «Բուժական կոսմետոլոգիայի ընդհանուր մեթոդները»:

Քոլեջի դասավանդողները մոդուլային ծրագրերի իրականացման համար մշակել են ուսանողներին տրվող ուսումնառության նյութեր, որտեղ ներկայացված են դասի թեմայի առանցքային հարցերը հայերեն և լատիներեն բժշկական տերմինաբանությամբ, առկա են մեթոդական հանձնարարականներ, աղյուսակներ, սխեմաներ, դիագրամներ և նկարներ, այդուհանդերձ, ուսանողների ձեռք բերած կարողությունների ստուգման նպատակով չեն կիրառվում չեք-լիստեր:

ՄՈՒՀ-ը չունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մշակած քաղաքականություն, այսուհանդերձ փորձագիտական ուսումնասիրությունները և դասալսումները ցույց տվեցին, որ քոլեջում կիրառվում են դասավանդման և ուսումնառության բազմազան ուսանողակենտրոն մեթոդներ, որոնք

ապահովում են գրեթե բոլոր ուսանողների ներգրավվածությունը ուսումնական գործընթացին: Օրինակ, դերային խաղեր (դասախոսները դասի ընթացքում առաջադրում են դերային խաղ, որի շրջանակներում ուսանողները հանդես են գալիս բուժհաստատություն դիմած հիվանդի, բժիշկի և բուժքրոջ դերերում), իրավիճակային խնդիրներ (ուսանողները հանձնարարված իրավիճակային խնդրի տվյալների հիման վրա իրականացնում են բուժքույրական ախտորոշում, խնդրի բացահայտում և ներկայացնում մինչբժշկական օգնության քայլերը), ալգորիթմներով մուլյաժների վրա մանիպուլյացիաների իրականացում, տեխնիկական միջոցների կիրառում (հաղորդած նյութի ամրապնդումը իրականացվում է առցանց թեստերի միջոցով, որը հնարավորություն է ընձեռում ուսանողներին տեղում տեսնել ճիշտ կամ սխալ պատասխանները և շտկել դրանք): Այսուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ուսանողներին տրվող ոչ բոլոր հանձնարարականներում և առաջադրանքներում է առկա ինքնուրույն բաղադրիչը:

Քոլեջի ուսումնաարտադրական և արտադրական պրակտիկաները, գործնական պարապմունքների մի մասը անցկացվում են տարածաշրջանի բուժհաստատություններում, դեղատներում, ատամնատեխնիկական լաբորատորիաներում և կոսմետոլոգիական կենտրոններում (Վանաձորի ԲԿ, «Հ. Դիլանյան» դեղատուն, «Սյուզի մեյք-ափ իմիջ կենտրոն», «Սարգիս Ավագյան» ստոմատոլոգիական կլինիկա) պայմանագրերի հիման վրա, ինչպես նաև հնարավորություն է տրվում ուսանողներին ընտրել իրենց նախընտրած պրակտիկայի վայրը կապված իրենց բնակության տեղից, որը կարգավորվում է ուսանողների միջնորդությամբ բուժհաստատության և քոլեջի միջև համաձայնագրի հիման վրա: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ պրակտիկայի ծրագրերը պարունակում են տեղեկատվություն պրակտիկայի ընթացքի և ուսանողների իրականացվելիք միջամտությունների շրջանակի վերաբերյալ, ինչպես նաև պրակտիկայի անցկացման վայրի, մոդուլի, ժամաքանակի և օրերի: Պրակտիկայի ընթացքում ուսաանողները լրացնում են օրագրեր, որոնցում առկա է բացատրական գրություն պրակտիկայի ընթացքի վերաբերյալ, գործնական միջամտությունների և կարողությունների ցանկը (օրինակ, ախտահանիչ լուծույթների պատրաստում և գործիքների ախտահանում, վիրահատական դաշտի մշակում, կարերի խնամք, դեղանյութերի պահանջագրերի կազմում, օգնություն ծննդաբերության գործունեության շրջաններում, մաշկի խնամքի կատարում և այլն), որը ուսանողը պարտադիր պետք է իրականացնի պրակտիկայի ընթացքում մեկ և ավելի անգամներ: Պրակտիկայի ավարտին ուսանողները քոլեջ են ներկայացնում լրացված օրագրերը, որտեղ նշված են կատարված միջամտությունների քանակը, ըստ օրերի ուսանողի կողմից տեսած և կատարված աշխատանքի բովանդակությունը: Օրագրի վերջում ուսանողը հաշվետվություն է լրացնում, որտեղ կիսվում է իր տպավորություններով, դիտողություններով և առաջարկներով: Պրակտիկայի գնահատումն (10 բալային համակարգով) իրականացնում է պրակտիկայի ղեկավարը ինչպես պրակտիկայի ընթացքում՝ յուրաքանչյուր օրվա վերջում, այնպես էլ պրակտիկայի ավարտին՝ ամփոփ գնահատականով և ուսանողի բնութագրով:

Քոլեջում ուսանողների գիտելիքները և ձեռք բերած գործնական կարողությունները և հմտությունները ստուգվում և գնահատվում են «Ուսանողների ստուգարքների, քննությունների կազմակերպման, անցկացման», «Ուսանողների ստուգարքների, քննությունների բողոքարկման (վերահանձնման)», «Պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման» կանոնակարգերի համաձայն, որոնցում ներկայացված են գիտելիքների ստուգման, գնահատման (վերանայման) ընդհանուր դրույթները, ընթացակարգերը և պահանջները, գնահատման համակարգերի (10 և 20 բալային) յուրաքանչյուր գնահատականի արժեքը (օրինակ, 7-8-ը՝ լավ, 9-10-ը՝ գերազանց), սակայն սահմանված չեն գնահատականների ձևավորման հստակ չափանիշներ: ՄՈՒՀ-ում գործարկվում է նաև «Գնահատման մեթոդներ» ուղեցույցը, որտեղ նկարագրված են գնահատման մեթոդները (գործընկերների գնահատում, հմտությունների թեստ, ինքնաստուգում, փոխստուգում և այլն), դրանց ներկայացվող պահանջները և չափորոշիչները:

ՎՊԲՔ-ում գործում է «Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման, բողոքարկման համակարգ» կանոնակարգը, որի միջոցով ուսանողները իրավունք են ունենում բողոքարկելու՝ գիտելիքների ստուգման ցանկացած բաղադրիչից և ստացած գնահատականին համաձայն չլինելու դեպքում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում գնահատականի բողոքարկման դեպքեր չեն գրանցվել:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում կիրառվում են գնահատման մեթոդներ, որոնք հիմնականում ապահովում են ակադեմիական ազնվությունը, ինչպես նաև ուսումնառության նյութի յուրացումն ու ամրապնդումը: Մասնավորապես, «Հոգեբանություն, ծառայողական վարվելակերպ, մասնագիտական իմիջ» մոդուլի ստուգման ընթացքում դասախոսները կիրառում են գնահատման ձևավորող մեթոդը, որի ընթացքում ոչ միայն ստուգվում են ուսանողների գիտելիքները՝ սկզբում SS կիրառմամբ, իսկ այնուհետև ֆրոնտալ հարցմամբ, այլև բացատրվում, մեկնաբանվում են սխալ և ճիշտ պատասխանները: Նյութի ամրապնդման համար վերջում հանձնարարվում է լրացնել թեստ: Թեստերը տրվում են «Kahoot», «Google test», «Pin bord» հարթակների օգտագործմամբ, դասերի ժամանակ կիրառվում են նաև քարտային մեթոդը և խմբային աշխատանքների արդյունքները գնահատելու մեթոդները:

2022թ. հոկտեմբերից քոլեջում գործում է «Ակադեմիական ազնվության կարգ», որով կարգավորվում են ակադեմիական ազնվության սկզբունքները, նպատակները, արգելված և պատշաճ վարքագծի դրսևորումները, ինչպես նաև ակադեմիական ազնվության խախտումների հետևանքները, պատասխանատվության միջոցները և ակադեմիական անազնվության դեպքերի լուծման ընթացակարգը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում ակադեմիական անազնվության դեպքեր չեն գրանցվել, այսուհանդերձ փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների իրականացրած աշխատանքներում հիմնականում բացակայում են օգտագործված գրականության ցանկը, հղումները և այլն:

Քոլեջում պետական ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է միջմոդուլային համալիր բանավոր քննությամբ, որին նախորդում է թեստային գրավոր քննությունը («Մանկաբարձական գործ» մասնագիտություն) կամ 2 բանավոր միջմոդուլային քննություններով՝ ընդհանուր մասնագիտական և հատուկ

մասնագիտական մոդուլներից («Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտություն)։ Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ պետական ամփոփիչ ատեստավորման ընթացքում ստուգվում են ուսանողների տեսական գիտելիքները և գործնական կարողությունները. մասնավորապես՝ «Քույրական գործ» մասնագիտության ուսանողներին տրվում են իրավիճակային խնդիրներ, որոնց շրջանակներում ուսանողները պետք է ներկայացնեն տվյալ հիվանդության բնորոշումը, կլինիկական դրսևորումները, ախտորոշման մեթոդները, բուժման սկզբունքները, քույրական գործընթացի փուլերը և ցուցադրեն անհրաժեշտ մանիպուլյացիաները, այդուհանդերձ ոչ բոլոր մասնագիտությունների պետական ամփոփիչ ատեստավորման ընթացքում է շեշտադրվում գործնական կարողությունների ստուգումը (օրինակ, «Մանկաբարձական գործ» մասնագիտության պարագայում)։

Քոլեջը թեև չունի մշակած բենչմարքինգի քաղաքականություն, այդուհանդերձ համեմատական վերլուծություն է իրականացրել «Երևանի հայ-ամերիկյան «Էրեբունի» պետական բժշկական քոլեջի» և Երևանի հենակետային բժշկական քոլեջի մասնագիտական ծրագրերի հետ հետևյալ ուղղություններով՝ մասնագիտական առարկայացանկ, դասընթացների ժամային կառուցվածք, դասավանդման և գնահատման մեթոդներ, ՄԿԾ բովանդակային կառուցվածք, պրակտիկա, ՄԿԾ վերջնարդյունքներ։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ իրականացված համեմատական վերլուծությունների արդյունքում կրթական ծրագրերի բարելավում դեռևս չի իրականացվել։

Մշտադիտարկման շրջանակներում քոլեջում իրականացվում են դասալսումներ, որոնց արդյունքները մանրամասն քննարկվում են մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակ. լավագույն փորձի տարածումը, վեր հանված խնդիրների լուծումը և թերությունների շտկումը ապահովելու նպատակով։ Քոլեջը ՄԿԾ-ների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման նպատակով հետադարձ կապ է ապահովում դասախոսների, ամբիոնների վարիչների, պրակտիկաների ղեկավարների, գործատուների, պրակտիկ գործունեություն իրականացնող բուժաշխատողների, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների անդամների, ուսանողների և շրջանավարտների հետ հարցումների, հանդիպումների և ֆոկուս խմբային քննարկումների միջոցով։ Որոշ դեպքերում ուսանողները և պրակտիկայի ղեկավարները քոլեջին են ներկայացնում պրակտիկայի վայրում ուսանողների գործնական կարողությունների կիրառման ընթացքում տեղ գտած թերությունները, կիրառվող նորարական մոտեցումները։ Աշխատաշուկայի պահանջների վերլուծության արդյունքում, «Բուժական կոսմետոլոգիա» կրթական ծրագրի ընտրովի մոդուլի շրջանակներում, ներառվել են հոնքերի փոշեդրում, կարբոնային պիլինգ, դեմքի ուրվագծային պլաստիկա և այլ թեմաներ, որոնք չեն ուսումնասիրվում ուսումնական պլանով նախատեսված մոդուլների ընթացքում։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը, գործատուների առաջարկով և օժանդակությամբ, նախատեսում է վերանայել որոշ ՄԿԾ-ների թեմաների արդիականությունը։

Դատողություններ։ Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը կրթական ծրագրերն իրականացնում է իր առաքելությանը և ռազմավարությանը համահունչ և առաջնորդվում է պետական կրթական չափորոշիչներով։ Այնուամենայնիվ,

մտահոգիչ է, որ քոլեջը չի մշակել ՄԿԾ-ների մասնագրեր և վերջնարդյունքներ, ինչը կնպաստի վերջնարդյունքահեն ուսումնառության նյութերի և առաջադրանքների կազմմանը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ՄԿԾ-ների իրականացման համար մշակել և կիրառում է ուսանողների վերլուծական մտածողությունը, գործնական կարողությունները զարգացնող առաջադրանքներ, միաժամանակ խումբը գտնում է, որ ուսումնական գործընթացում չեք-լիստերի կիրառումը կխթանի ուսումնառության ընթացքում ուսանողների ինքնուրույն աշխատանքը և ձեռք բերված գործնական կարողությունների կատարելագործումը:

Փորձագիտական խումբը ընդունում է ուսանողակենտրոն մոտեցումները, որոնք կիրառվում են քոլեջի կողմից ուսումնառության ընթացքում, ներառյալ ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառումը: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականության մշակումն ու իրականացումը, որոնք համահունչ կլինեն մասնագիտությունների կրթական ծրագրերի ակնկալվող ուսումնառության արդյունքներին, կբարձրացնեն ուսումնական գործընթացի արդյունավետությունը: Փորձագիտական խումբը կարևորում է ուսանողներին տրվող բոլոր հանձնարարականներում և առաջադրանքներում ինքնուրույն բաղադրիչի ապահովումը, ինչը կխթանի ուսանողների վերլուծական կարողությունների զարգացումը:

Փորձագիտական խումբը կարևորում է պրակտիկաների և գործնական պարապմունքների կազմակերպումը տարածաշրջանի գործատու բուժհաստատություններում, դեղատներում և կոսմետոլոգիական կենտրոններում, ինչը հնարավորություն է ընձեռում ուսանողներին կիրառել քոլեջում ձեռք բերած գործնական կարողությունները աշխատանքային պայմաններում և ճանաչելի դառնալ ապագա գործատուների համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջում գնահատման գործընթացը կանոնակարգող որոշակի մեխանիզմների առկայությունը, այսուհանդերձ գնահատման չափանիշների հստակ բնորոշումը թույլ կտար դասախոսներին ցուցաբերել միասնական մոտեցումներ: Տպավորիչ է, որ քոլեջում ինտերակտիվ մեթոդները կիրառվում են ոչ միայն դասավանդման ընթացքում նյութը հաղորդելու և ամրապնդելու նպատակով, այլև գնահատման ժամանակ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ուսանողների գործնական հմտությունները ստուգվում են նաև ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակ գործնական առաջադրանքների տրամադրման, մանիպուլյացիաների իրականացման միջոցով, այսուհանդերձ կարևոր է, որ բոլոր մասնագիտությունների պետական ամփոփիչ ատեստավորման ընթացքում շեշտադրվի գործնական կարողությունների ստուգումը:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի ջանքերը նմանատիպ քոլեջների փորձն ուսումնասիրելու ուղղությամբ, այսուհանդերձ կարևոր է համեմատական վերլուծություններ կատարելիս վեր հանել առկա լավագույն փորձը և տեղայնացնել այն՝ հաշվի առնելով տարածաշրջանի և քոլեջի առանձնահատկությունները: Հաշվի առնելով, որ քոլեջը կարևորում է առաջավոր փորձի փոխանակումը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ բենչմարքինգի քաղաքականության մշակումն ու կիրառումը կբարձրացնի

գործընթացների արդյունավետությունը, կնպաստի ծրագրերի արդիականացմանը, ուսանողների շարժունությանը և որոշակի խթաններ կստեղծի միջազգայնացման համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում կրթական ծրագրերի մշտադիտարկման աշխատանքներում շահակիցների տարբեր խմբերի ներգրավվածությունը և բազմազան մեխանիզմների առկայությունը, այսուհանդերձ խումբը գտնում է, որ մշտադիտարկման արդյունքների հիման վրա բարելավումները սակավաթիվ են:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Վանաձորի պետական բժշկական քոլեջը իրականացնում է առաքելությանը համապատասխան ՄԿԾ-ներ, որոնք համահունչ են ՈԱՇ-ին, կիրառվում է ուսանողների վերլուծական մտածողությունը, գործնական կարողությունները զարգացնող առաջադրանքներ, առկա են գնահատման գործընթացը կանոնակարգող որոշակի մեխանիզմներ, կրթական ծրագրերի մշտադիտարկման աշխատանքներում ներգրավված են տարբեր շահակիցներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՊԲՔ-ը բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՊԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր:

ՎՊԲՔ-ում ընդունելությունն իրականացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը հաստատելու մասին» հրամանի, այդ թվում նաև քոլեջում գործող «Վանաձորի պետական բժկական քոլեջ» ՊՈԱԿ-ի ընդուլության կանոնակարգի համաձայն: Ընդունելությունն իրականցվում է «Կենսաբանություն» առարկայից բանավոր քննության արդյունքների հիման վրա: Ընդունելության գործընթացի հասանելությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով, ամենօրյա թարմացումները տեղադրվում են քոլեջի ֆեյսբուքյան էջում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում հաստատված հստակ ժամանակացույցի համաձայն կարիերայի ուղղորդման պատասխանատուն, ինչպես նաև քոլեջի վարչական և այլ ստորաբաժանումների ներկայացուցիչները մասնագիտական կողմնորոշման նպատակով այցեր են իրականցնում մարզի դպրոցներ: Ընդունելության կանոնակարգի համաձայն՝ դպրոցներ այցելությունների գրաֆիկը կազմվում է յուրաքանչյուր տարի մասնագիտական կողմնորոշման խորհուրդի կողմից: Քոլեջում կազմակերպվում են նաև բաց դռների օրեր, որի ժամանակ դիմորդները ծանոթանում են քոլեջում իրականացվող կրթական ծրագրերին, ընդունելության կարգին և քոլեջի շենքային

պայմաններին։ Կարիերայի կենտրոնի կողմից դիմորդների մասնագիտական կողմնորոշման նպատակով մշակվել են քոլեջում «ՎՊԲՔ-ում ուսուցանվող մասնագիտությունների նկարագրիչներ», որոնք տեղադրվել են քոլեջի ֆեյսբուքյան էջում: Ըստ ինքնավերլուծության՝ 2023-2024 ուսումնական տարում քոլեջում սովորում է 362 ուսանող, և վերջին հինգ տարիներին գրանցվել է ուսանողների թվի աճ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները քոլեջի մասին հիմնականում տեղեկացել են ֆեյսբուքյան էջից, հարազատներից և դպրոցներում քոլեջի կողմից իրականացրած մասնագիտական կողմնորոշման հանդիպումների միջոցով։

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով 2022 թվականից ՎՊԲՔ-ում գործում է «Ուսանողների կողմից կրթական ծառայությունների և ուսումնական գործընթացի գնահատման» կանոնակարգը։ Կարիերայի կենտրոնը կրթական կարիքների վերհանման նպատակով ֆեսբուքյան էջի միջոցով առցանց հարցում է իրականացրել ուսանողների շրջանում, որին մասնակցել է 50 ուսանող։ Հիմնական առաջարկությունները վերաբերել են ուսումնական գործընթացի հետաքրքիր մեթոդներով կազմակերպմանը։ Հարցման արդյունքները քննարկվել են Մանկավարժական խորհրդի նիստում։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թեև ուսաողները հաճախ հանդիպումներ են ունենում տնօրենի հետ, այնուամենայնիվ հիմնական հարցերը հղում են կուրսղեկներին, ՈՒԽ-ին։ Քոլեջում առկա է բողոքների և առաջարկությունների արկղ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ վերհանված կրթական կարիքների հիման վրա տնօրենի տեղակալները և կուրսղեկները քննարկումների արդյունքում որոշակի փոփոխություններ են իրականացրել, մասնավորապես՝ գործնական պարապմունքների, պրակտիկաների ժամաքանակի ավելացումը և դրանց բազաներում իրականացնելը։ Այսուհանդերձ, հիմնականում գործնական առաջադրանքները անց են կացվում բազաներում։ Ուսանողները ներգրաված են նաև Կառավարման խորհրդում, որտեղ ևս բարձրաձայնում են իրենց խնդիրները (օրինակ՝ մարզադահլիճի վերանորոգման և այլն)։

Որակի ապահովման պատասխանատուների և կարիերայի ուղղորդման պատասխանատուի նախաձեռնությամբ հարցումներ են իրականացվում ուսանողների և շրջանավարտների շրջանում։ Մասնավորապես, գոհունակությունը կրթական ծրագրերից, նյութատեխնիկական ապահովվածությունից և այլն (գնահատումը իրականացվում է 1-5 բալային սանդղակով)։

Ինքնավերլուծության համաձայն, խորհրդատվական ծառայությունների մասին տեղեկացված է ուսանողների 55%-ը, լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում ընդգրկված է 46%-ը, խորհրդատվական ծառայություններից բավարարված է 51%-ը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՎՊԲՔ-ը անվճար հիմունքներով խորհրդատվական պարապմունքներ է իրականացնում դիմորդների շրջանում «Կենսաբանություն» առարկայից։ Քոլեջում խորհրդատվություններ են անցկացվում նաև պետական որակավորման ատեստավորումից և քննություններից առաջ, ուսումնական մասը կազմում է քննական առարկաների խորհրդատվությունների ժամանակացույցը։

Քոլեջում գործում է «ՎՊԲՔ-ում բացակայած ուսանողների բացակա դասաժամերի լրացման կանոնակարգ», որի նպատակն է նվազեցնել ուսանողների անհարգելի բացակայությունների քանակը: Անկախ բացակայության պատճառից ուսանողները

կատարում են լրացումներ ռեֆերատների պատրաստման միջոցով և գործնական աշխատանքներից բացակայության դեպքում դասերի ավարտից հետո դասախոսների հետ աշխատում են: Լրացուցիչ պարապմունքների գործընթացը վերահսկվում է պրակտիկայի ղեկավարի, բաժնի վարիչի, ուսումնական մասի և ամբիոնի կողմից:

Համաձայն ինքնավերլուծության՝ ուսանողների 65%-ը տեղեկացված է իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին, 57%-ն օգտվում է և 53%-ը բավարարված է այդ ծառայություններից: Ըստ ժամանակացույցի յուրաքանչյուր օր ժամը 14:00- 17:00-ը ուսանողները կարող են դիմել տնօրենին, իսկ տնօրենի տեղակալներին և մյուս վարչական աշխատակիցներին կարող են դիմել ցանկացած ժամի: Դիմումներն ընդունվում են և գրավոր, և բանավոր ձևով: Ուսանողները հիմնականում վարչական աշխատակազմին դիմում են վարձավճարների զեղչման հարցերով: Քոլեջի աշխատակիցների, վարչական պատասխանատուների, քոլեջի մարմինների հետ ուսանողների կապի միջոց է հանդիսանում նաև ուսանողական խորհուրդը:

Քոլեջում 2019 թվականից առկա է կարիերայի ուղղորդման և աջակցման պատասխանատուի հաստիքը, ով աջակցում է աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը, իրենց մասնագիտությամբ զբաղվածության հնարավորությունների բացահայտմանը: ՎՊԲՔ-ում գործում է «Կարիերայի ուղղորդման և աջակցման կանոնակարգ»-ը: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ գործատուների հետ կնքվել են համագործակցության պայմանագրեր, որի արդյունքում ուսանողները ուսումնական և արտադրական պրակտիկաններն անց են կացնում գործատուների մոտ, իսկ լավագույն ուսանողներին գործատուները ընդունում են աշխատանքի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կարիերայի պատասխանատուի ջանքերով ուսանողները մասնակցել են բազում աշխատանքային տոնավաճառների, թվով 61 սեմինարների (մասնավորապես՝ «Լոռու զարգացման կենտրոն» ՀԿ-Ի կողմից կազմակերպված «Ապագայի հմտություններ և աշխատատեղեր, մարզաբնակ երիտասարդների համար» սեմինարին և այլն) և ցուցահանդեսների: Քոլեջի աշխատակիցները և ուսանողները մասնակցել են զբաղվածության կենտրոնի կողմից կազմակերպվող աշխատանքի տոնավաճառներին և ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ կազմակերպված 2018 - 2022 թվականներին «Կրթություն և կարիերա էքսպո» միջոցառումներին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը պատրաստվում է 2023թ-ին Երևանում անցկացվելիք «Կրթություն և կարիերա EXPO» հանրապետական միջոցառմանը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն ամենօրյա ռեժիմով հետևում է Վանաձորի զբաղվածության կենտրոնի կողմից հայտարարվող մրցույթներին և միջոցառումներին, դրանք տեղադրում է քոլեջի ֆոսբուքյան էջում: Կարիերայի պատասխանատուն անհրաժեշտության դեպքում նաև օգնում է շրջանավարտներին համապատասխան փաստաթղթերը /ռեզյումե և այլ/ ներկայացնելու հարցում: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ 2020թ.-ի 88 շրջանավարտներից 42-ը (48%-ը) աշխատում են իրենց մասնագիտությամբ, 2021թ.-ի 93 շրջանավարտներից 33-ը (35%-ը), 2022թ.-ին 67-ից 32-ը (48%-ը), իսկ 2023թ.-ին 101 շրջանավարտներից 34-ը (34%-ը) աշխատում են իրենց մասնագիտությամբ: ՎՊԲՔ-ում առկա է շրջանավարտների վերաբերյալ տվյալների բազա, որը պարբերաբար թարմացվում է:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՎՊԲՔ-ում ուսանողների վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացման նպատակով ուսանողներին տարբեր թեմաների վերաբերյալ հիմնականում հանձնարարվում են ռեֆերատներ և գործնական առաջադրանքներ, որոնց հիմքում լինում են տարբեր հետազոտական բաղադրիչներ: Օրինակ՝ «Բուսաբանության հիմունքներ» մոդուլի շրջանակներում ուսանողներին հանձնարարվել է բույսեր աճեցնել ֆիքսելով աճման փուլերը: Ուսանողները հետազոտության արդյունքների համեմատական վերլուծություն են իրականացրել, դուրս բերելով բույսերի աճման առանձնահատկությունները: «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրի շրջանակներում հանձնարարվում է ուսանողներին ծնոտի մոդելի վրա վերականգնել վնասված ատամի պսակը: Այսուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ռեֆերատներում բացակայում է կատարվող աշխատանքի նպատակը և ուսանողի ինքնուրույն եզրահանգումներ կատարելու բաղադրիչը:

Ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջի բոլոր ենթակառուցվածքները պատասխանատվություն են կրում ուսանողների իրավունքների պաշտպանության, ինչպես նաև աջակցության և ուղղորդման համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն ուսման վարձի զեղչեր է իրականացնում սոցիալապես անապահով ուսանողների, պատերազմի մասնակիցների և հաշմանդամների համար: Քոլեջում գործում է ուսանողներից կազմված ինքնակառավարման մարմին՝ ուսանողական խորհուրդը: Ըստ ՎՊԲՔ-ի ՈՒԽ կանոնադրության՝ ուսանողական խորհուրդը ապաքաղաքական, ապակուսակցական կազմակերպություն է, ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան հաստատության գործունեության կազմակերպմանը նպաստելու, անմիջականորեն իրենց վերաբերող հարցերի մասին սովորողների կարծիքի ազատ արտահայտումն ապահովելու և սովորողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ հաստատության կանոնադրության դրույթների պահպանումը վերահսկելու նպատակով: ՈՒԽ կազմում գործում են ժամանցամշակութային, առողջապահական, սպորտային, կարգապահական, տեղեկատվական, ուսումնադաստիրակչական հանձնաժողովները: Մասնավորապես՝ կարգապահական հանձանողովը զբաղվում է կուրսղեկների հետ հարկերում հերթապահության պլանավորմամբ: Ուսանողական խորհրդի նիստերը գումարվում են ամիսը մեկ անգամ: Հրավիրվում են նաև արտահերթ նիստեր ըստ անհրաժեշտության:

ՈՒԽ-ը առաջին նիստերին քննարկվում են տարվա ընթացքում նախատեսվող միջոցառումները և այլ քոլեջների հետ համագործակցության շրջանակները: Մասնավորապես՝ Վանաձորի պետական տարածաշրջանային քոլեջում Մեդիագրագիտություն թեմայով սեմինար է իրականացրել քոլեջի շրջանավարտներից մեկը:

Ուսանողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատումը կատարվում է տարբեր ուսանողների շրջանում կատարված հարցումների, բաժինների վարիչների հաշվետվությունների, շրջանավարտների կարծիքների և դասալսումների արդյունքների հիման վրա: ՈԱ հանձնաժողովի և «Որակի ուսանող-դեսպան» խորհրդի առաջարկությունները ստորաբաժանումներ են ներկայացվում գործընթացների պարբերաբար վերանայման, բարելավման և զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման համար: «Որակի ուսանող-դեսպան» խորհրդի անդամները ՎՊԲՔ

ուսանողներ են, ովքեր մասնակցում են քոլեջում կրթական գործընթացների որակի գնահատման և բարելավման աշխատանքներին, կառավարման օղակների հանդիպումներին, ներքին և արտաքին վերապատրաստումներին, կրթական թեմաների շուրջ կազմակերպվող բանավեճերին և այլն: Կարևորելով ուսանողական քննարկումները որպես որակի մշակույթի ներդման բաղադրիչ և որակի ապահովման գործընթացներին ուսանողների ներգրավման խրախուսումը և ապահովումը, «Որակի ուսանող-դեսպան» խորհրդի անդամները նախաձեռնել են Փոդքասթային քննարկումների (Podcast) շարք:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնայատում, որ ՎՊԲՔ-ում գործում են ուսանողների ընդունելության և հավաքագրման կանոնակարգեր և մեխանիզմներ: Գովելի է նաև այն, որ դիմորդների ներգրավմանն նպատակով իրականացվող աշխատանքները նպաստում են դիմորդների շրջանում հետաքրքրվածության ավելացմանը և դիմորդների թվի աճին:

Դրական է նաև, այն որ քոլեջում գործում է ուսանողների կրթական կարիքների վերհանման տարբեր մեխանիզմներ, ինչպիսիք են հարցումները, բողոքների արկղը, կուրսղեկների ինստիտուտը և այլն, որոնք նպաստում են ուսանողների խնդիրների վերհանմանը և համապատասխան արձագանքին ղեկավար մարմինների կողմից:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում իրականացվում են խորհրդատվական և լրացուցիչ պարապմունքներ և առկա է հստակ ժամանակացույց: Գովելի է համարվում, որ բացակայությունների հետևանքով ուսումնական նյութը բաց թողած ուսանողները հստակ ժամանակացույցով լրացնում են բացթողումները և դա վերահսկվում է տարբեր օղակների կողմից, այս ամենը նպաստում է սահմանված վերջնարդյունքների ձեռքբերմանը և ուսանողների առաջընթացին:

Խումբը դրական է համարում, որ կարիերայի կենտրոնը ակտիվորեն համագործակցության եզրեր է փնտրում տարբեր գործատուների հետ, աջակցում է ուսանողներին աշխատանքի տեղավորման, ինքնակենսագրականների պատրաստման հարցում, ինչը նպաստում է քոլեջ-շրջանավարտ և գործատու-շրջանավարտ կապի ապահովմանը: Դրական է նաև այն, որ կարիերայի կենտրոնի կողմից տվյալներ են հավաքագրվում շրջանավարտների վերաբերյալ և առկա է հաճախակի թարմացվող շրջանավարտների բազա:

Փորձագիտական խումբը կարևորում է հետազոտական բաղադրիչի ներդրման ուղղությամբ քոլեջի քայլերը, մասնավորապես առաջադրանքներում, ռեֆերատիվ աշխատանքներում, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ բոլոր ՄԿԾ-ներում այս բաղադրիչի ներդրումը և դասախոսների ու ուսանողների համար խրախուսման մեխանիզմների կիրառումը, կնպաստի ուսանողների մոտ վերլուծական հմտությունների զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին՝ Ուսանողական խորհուրդը, որը ներգրավված է քոլեջում առկա բոլոր գործընթացներում: Գովելի է նաև այն, որ ՈւԽ-ն համագործակցության շրջանակներում կազմակերպում է միջոցառումներ և սեմինարներ, մասնակից դարձնելով քոլեջի շրջանավարտներին:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման

մեխանիզմներ: Դրական է նաև քոլեջում «Որակի ուսանող-դեսպան»-ի առկայությունը, ինչը կարող է նպաստել մատուցվող ծառայությունների որակի վերաբերյալ ամբողջական պատկեր ստանալուն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՎՊԲՔ-ում առկա են ուսանողների ընդունելության և հավաքագրման մեխանիզմներ, ուսանողները ցանկացած ժամանակ կարող են դիմել վարչական անձնակազմին, առկա են խորհրդատվական ծառայություններ, իրականացվում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ, գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՊԲՔ-ը բավարարում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՊԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր:

ՎՊԲՔ-ի նախորդ (2018-2023 թթ.) և ներկա (2023-2028թթ.) ՌԾ-ների ռազմավարական նպատակների տիրույթում են որակյալ կադրային ներուժը և դասախոսամանկավարժական կազմը: Ըստ այդմ՝ որակյալ կադրային ներուժ ունենալու համար նախորդ ռազմավարական պլանում նախատեսվող միջոցառումների շարքում են որակի հավաստման չափանիշներին համապատասխան դասախոսական կազմի, մարդկային ռեսուրսների համակազմի զարգացումը, համալրումը և բարելավումը, վարչական և դասախոսական անձնակազմի համար պաշտոնի անձնագրերի մշակումը, կառավարման տարբեր մակարդակների միջև հստակեցված լիազորությունների և պատասխանատվության բաշխման ապահովումը, աշխատանքային հարմարավետ միջավայրի ստեղծումը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները և վարչական կազմն ունեն պաշտոնի անձնագրեր, որոնցում սահմանված են գործառույթները, իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունների շրջանակները: Աշխատակիցների իրավունքները և պարտականությունները սահմանված են նաև քոլեջի «Ներքին կարգապահական կանոններում»: Առանձին ստորաբաժանումների համար առկա են նաև ներքին կանոնակարգեր, օրինակ՝ «Գրադարանի գործունեության կազմակերպման կանոնակարգ», «Արխիվի գործունեության կազմակերպման կանոնակարգ», «Ամբիոնների կանոնակարգ», «Կարիերայի ուղղորդման և աջակցման կանոնակարգ» և այլն:

Քոլեջի աշխատողների աշխատանքի ընդունումն ու ազատումը իրականացվում է ՀՀ Օրենսդրության, քոլեջի Կանոնադրության և «Ներքին կարգապահական կանոններ»-ի համաձայն: ՎՊԲՔ-ի և աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են աշխատանքային պայմանագրերով: Դասախոսական կազմի թափուր տեղերի համալրումը անցկացվում է մրցութային կարգով՝ «Մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կանոնակարգ»-ի համաձայն, որը հաստատված է 2021 թվականի դեկտեմբերի 20-ին: Կանոնակարգում ներառված է մրցույթի անցկացման և ընտրության իրականացման ընթացակարգը: Քոլեջը մրցույթի տվյալ կարգով աշխատակցի ընդունման դեռևս երկու փորձ ունի: Քոլեջում համատեղությամբ աշխատում են նաև գործատու կազմակերպություններից դասավանդող մասնագետներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հիմնական աշխատակիցների ընդունելությունը տեղի է ունենում մրցութային կարգով, իսկ հրավիրյալ դասախոսները /համատեղողներ/ մրցույթի չեն մասնակցում: Այցից նաև պարզ դարձավ նաև, որ քոլեջի կողմից մշտապես խրախուսվում է ոլորտի պրակտիկ մասնագետների ներգրավումը: Մրցույթի անցկացման պարագայում կարևորվում է դասախոսի պրակտիկ փորձառությունը և մասնագիտական գիտելիքները: Քոլեջը թեև յուրաքանչյուր մասանգիտական ծրագրի համար դասախոսական կազմին ներկայացվող հստակ պահանջներ չի սահմանել, այնուամենայնիվ փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առաջնորդվում է մասնագիտությունների ՊԿՉ-ների 5-րդ գլխում սահմանվող մասնագիտության որակավորման հիմնական կրթական ծրագրի իրականացման պայմանների նկատմամբ պահանջներով՝ դասախոսական կազմի ընտրությունը պայմանավորելով մասնագիտական կրթական ծրագրերի պահանջներով և դասախոսի պաշտոնի անձնագրով:

Դասախոսների մանկավարժական գործունեության, մասանգիտական հմտությունների և կարողությունների գնահատող մեխանիզմների մշակումը և ներդնումը քոլեջի ռազմավարական ծրագրի գործողությունների շրջանակում է: Դասախոսական կազմի աշխատանքների վերահսկումը և գնահատումը հիմնականում իրականացվում է դասալսումների միջոցով, որոնք կազմակերպվում և անցկացվում են «Դասալսումների իրականցման կանոնակարգի» համաձայն: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դասալսումները հանդիսանում են ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի, բաժնի, ամբիոնների վարիչների և մեթոդիստի տարեկան պլանավորման բաղկացուցիչ մաս: Դասալսումների արդյունքները քննարկվում և վերլուծվում են համապատասխան ձևաչափով՝ դուրս բերելով դասի առավելությունները և թերությունները, եզրակացությունները: Գործընթացը վերահսկվում է ուսումնական մասի կողմից: Դասալսումների արդյունքների վերլուծությունների հիման վրա ամբիոնների վարիչները իրականացնում են համապատասխան եզրակացություններ, տալիս մեթոդական աջակցություն, դուրս բերում վերապատրաստումների կարիքը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասալսումներ նախատեսվում են նաև Որակի պատասխանատուների կողմից: ՎՊԲՔ-ում դասախոսական կազմի աշխատանքների գնահատում իրականցվում է նաև ուսանողների և շրջանավարտների կողմից՝ տարբեր հարցումների միջոցով, որոնք կազմակերպվում և անցկացվում են Որակի պատասխանատուների կողմից: Մասնավորապես, քոլեջն ունի «Ուսանողների կողմից

կրթական ծառայությունների և ուսումնական գործընթացի գնահատման կանոնակարգ», որում առանձնացված ուղղություն է ուսանողների կողմից ուսումնական գործընթացի ընթացիկ որակի, ինչպես նաև դասախոսների մանկավարժահոգեբանական և մեթոդական կարողությունների գնահատումը: Նշված գործընթացի շրջանակներում Որակի պատասխանատուների կողմից կազմակերպել և անցկացվել է դասավանդվող առարկաների բովանդակության և դասավանդման որակի գնահատում, որի արդյունքների վերլուծության համաձայն ուսանողները ընդհանուր առմամբ գոհ են դասավանդումից, առաջարկել են միայն բարելավել դասավանդվող նյութերի ներկայացումը տեխնիկական միջոցներով: Ուսանողները մասնակցում են նաև «Դասախոսը ուսանողի աչքերով» գնահատմանը, որն իրականացվում է տարբեր մասնագիտությունների շրջանակներում: Նշված հարցման շրջանակներում քոլեջի կողմից խնդիր է դրվել հետազոտել դասախոսական կազմի աշխատանքները և տվյալներ ու տեղեկատվություն հավաքագրել դասախոսական կազմի աշխատանքների վերաբերյալ՝ վերջիններիս որակավորման աճին նպաստելու նպատակով: Հարկ է արձանագրել, որ նշված հարցման արդյունքների վերլուծությունը դեռևս ամբողջական չէ, արդյունքների վերլուծությունների աշխատանքները իրականացման փուլում են: Այնուամենայնիվ, առայժմ իրականացված հարցման արդյունքների վերլուծությունների համաձայն՝ ուսանողների կողմից դասախոսները գնահատվել են միջինից բարձր: Քոլեջի դասավանդող կազմի աշխատանքների գնահատում իրականացվել է նաև շրջանավարտների կողմից, ովքեր ըստ մասանգիտությունների գնահատել են դասավանդման և ուսումնառության գործընթացները, որի արդյունքները գոհացուցիչ են:

Քոլեջի դասախոսական կազմի կարիքների և ակնկալիքների գնահատման նպատակով Որակի պատասխանատուների կողմից կազմակերպվում և անցկացվում են հանդիպումներ, որոնց շրջանակներում քննարկվում են նաև դասախոսների գործունեությունը, ինչպես նաև դասախոսները ներկայացնում են իրենց բավարարվածությունը դասախոս-ուսանող, դասախոս-դասախոս փոխհարաբերություններից, նյութատեխնիկական հագեցվածությունից: Քոլեջի դասախոսական կազմն իրենց կարիքների հարցերով դիմում են ղեկավար կազմին՝ բաժնի վարիչին, ամբիոնների վարիչներին, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին կամ հասատատության տնօրենին:

Քոլեջի նախորդ և ներկա զարգացման ծրագրերում դասախոսների մասնագիտական առաջընթացի ապահովումը և դասախոսական ներուժի զարգացումը ռազմավարական կարևոր թիրախներից է: Քոլեջի դասախոսները մշտապես աջակցություն են ստանում մեթոդիստի կողմից, գործում է մեթոդական խորհուրդ: Մեթոդիստի կողմից հատկապես առանձին աշխատանքներ են տարվում սկսնակ դասախոսների հետ՝ ծանոթացնելով անհրաժեշտ փաստաթղթերին, մոդուլային ուսուցման առանձնահատկություններին և մատենավարության կանոններին: Մեթոդական աջակցություն է ցուցաբերվում նաև պրակտիկ դասավանդողներին, ովքեր դասավանդման փորձ չունեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը շարունակաբար խրախուսում է դասախոսների պարբերաբարական վերապատրաստումները՝ հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելու և դրանք դասավանդման գործընթացում կիրառելու նպատակով: Դասախոսները պարբերաբար մասնակցում են

վերապատրաստումների, որոնք հիմնականում մեթոդական են, իսկ մասնագիտական վերապատրաստումների հիմնականում մասնակցում են դասավանդող բժիշկները: Քոլեջն ունի «Դասախոսների վերապատրաստման կազմակերպման կանոնակարգ», որի համաձայն՝ յուրաքանչյուր ուսումնական տարում պետք է վերապատրաստվի ՎՊԲՔ-ի դասախոսների 20%-ը, այսինքն՝ 5 տարվա ընթացքում ամբողջ դասախոսական կազմը վերապատրաստվում է:

Վերապատրաստումները հիմնականում իրականացվում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից: ՎՊԲՔ-ի 20 դասախոսներ 2019 և 2022թթ. վերապատրաստումներ են անցել «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում «Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դասավանդման ընթացքում» թեմայով: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նշված վերապատրաստումը նպաստել է դասախոսների մեթոդական կարողությունների զարգացմանը: Տեղեկատվական նոր տեխնոլգիաներին տիրապետելու հմտությունների ձևավորման նպատակով քոլեջում վերապատրաստումներ են կազմակերպվում նաև տարիքային բարձր շեմ ունեցող դասախոսների համար՝ ծանոթացնելով նաև դասավանդման նոր մեթոդներին: Դասախոսների դասավանդման որակի բարելավմանը նպաստում են նաև փոխադարձ դասալսումները և համագործակցային դասերը, որոնց շրջանակներում դասախոսները տարածում են դասավանդման լավագույն մեթոդները: Վերապատրաստում անցած դասախոսները կազմակերպում են բաց դասեր, որոնց ժամանակ ներկայացնում են վերապատրաստումների արդյունքում իրենց ձեռք բերած հմտությունները և տարածելով իրենց փորձը: Փորձագիտական վերլուծությունները ցույց տվեցին, որ թեև քոլեջում առկա է մասնագիտական նեղ վերապատրաստումների կարիք, այդուհանդերձ, պրակտիկ դասավանդողների, ուսանողների պրակատիկաների ղեկավարների և գործատուների հետ համագործակցությունը դասախոսների համար ոլորտի նորարություններին տեղեկանալու հնարավորություն են ստեղծում: Դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներից է նաև քոլեջում աշխատակիցների համար կազմակերպված օտար լեզվի վերապատրաստումը՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար: Վերապատրաստումն իրականացվել է դաասվանդողների օտար լեզվի տիրապետման մակարդակի վերաբերյալ անցկացված հարցումների արդյունքների հիման վրա:

Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման կարևոր միջոց են նաև որոշ դասախոսների մասնագիտական ձեռնարկները և ուսումնամեթոդական ուղեցույցները:

Ներկայումս քոլեջն ունի 83 աշխատակից, որոնցից 48-ը դասախոսական կազմն է: Հիմնական դասախոսական կազմը 36-ն է, 12-ը՝ համատեղությամբ, որոնք հիմնականում գործող բժիշկներ են: Դասավանդող կազմից 9-ը քոլեջի շրջանավարտներ են: Դասախոսական կազմում կա մեկ գիտությունների թեկնածու, 25 դասախոսներ ունեն բարձրագույն կրթություն, 11-ը՝ բարձագույն բժշկական կրթություն: ՎՊԲՔ-ի ներկայիս 83 աշխատակիցներից 50-ի տարիքային շեմը մինչև 65 տարեկան է, 33-ինը՝ 65-ից բարձր: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջը հիմնականում ապահովված է կրթական ծրագերին համապատասխան դասախոսական կազմով, սակայն երկու մասնագիտություններում՝ «Դեղագործություն» և «Բուժական կոսմետոլագիա»

հատուկ մասնագիտական մոդուլների ծանրաբեռնվածությունը բաշխված է մեկ հոգու վրա: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում առկա է երիտասարդ կադրերի ներգրավման դժվարություններ, ինչը պայմանավորված է ցածր աշխատավարձով, իսկ կադրերի հոսունությունը հիմնականում վերաբերում է համատեղողներին:

Համաձայն ինքնավերլուծության և փորձագիտական ուսումնասիրությունների՝ դասախոսների որակավորման բարձրացման խթանման նպատակով ՎՊԲՔ-ում սահմանվում է ՊԴԿ աշխատավարձերի վճարման տարբերակում՝ կախված գիտական աստիճանից և մանկավարժական աշխատանքային ստաժից: Վերջին տարիներին կիրառվում է հավելավճարների տրամադրման մեխանիզմը, որը հիմնվում է քոլեջի տնտեսումների վրա: Հավելավճարի չափը տատանվում է հիմնական աշխատավարձի 50-100%-ի սահմաններում: Քոլեջում գործում է «Տնօրենի և մանկավարժների պարգևատրման և նյութական խրախուսման» կարգ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասավանդողները և վարչական կազմը խրախուսումներ ստանում են տարբեր աշխատանքների կատարման համար: Մասնավորապես, խրախուսվել են բանվոր-պահակներից 2-ը, դասավանդող դասախոսները՝ հետազոտական աշխատանքների իրականացման համար, օտար լեզվի դասախոսները՝ ներսում աշխատակիցների համար վերապատրաստում անցկացնելու համար:

Հաստիքացուցակը հաստատվում է օրինակելի հաստիքացուցակի հիման վրա: Քոլեջն ունի հաստիքացուցակով նախատեսված վարչական, ուսումնօժանդակ և սպասարկող աշխատակազմ: Առկա է դասախոսների ռեզերվ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում առկա է սերնդափոփության ռիսկ, ինչը պայմանավորված է երիտասարդ կադրերի ներգրավման դժվարություններով: Այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ քոլեջը կարևորում է արտաքին կապերի պատասխանատուի հաստիքի առկայությունը՝ արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների համակարգման նպատակով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը հիմնականում ապահովված է անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ կազմով, որոնց գործառույթները սահմանված են պաշտոնի անձնագրերում: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ քոլեջի վարչական և ուսումանօժանդակ կազմի տարեկան պլանավորումները իրականցվել են ըստ ռազմավարական ուղղությունների:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջի կողմից որակյալ կադրային ներուժի զարգացումը և դասախոսամանկավարժական կազմը ռազմավարական նպատակների թիրախում են: Դա նպաստում է որակյալ կադրերի ներգրավմանը, աշխատակիցների համար անհրաժեշտ բարենպաստ միջավարի ապահովմանը: Գովելի է հաստատության կողմից պրակտիկ դասավանդողների ներգրավման ջանքերը, ինչը նպաստում է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան գործնական հմտություններով և կարողություններով մասնագետների պատրաստմանը:

Դրական է, որ քոլեջը պարբերաբար իրականացնում է դասախոական կազմի կատարելագործման միջոցառումներ, վերապատրաստումներ, որոնք նպաստել են դասավանդման և ուսումնառության որակի բարելավմանը: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը դասախոսական կազմին մասնագիտական վերապատրաստումներին ընդգրկելու քայլեր ձեռնարկի, ինչը կնպաստի

դասախոսների մասնագիտական հմտությունների կատարելագործմանը: Փորձագիտական խմբի դիտարկմամբ դրական է նաև, որ քոլեջում առկա են դասախոսական կազմի աշխատանքների, նրանց կարիքների գնահատման, խրախուսման որոշակի մեխանիզմներ, ինչը թույլ է տալիս վերհանված կարիքների գնահատման հիման վրա ապահովել դասավանդման և ուսումնառության գործընթացի շարունակական բարելավում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի ջանքերը կադրերի կայունության ապահովվման ուղղությամբ: Այդուհանդերձ փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը քայլեր ձեռնարկի երիտասարդ կադրերի ներգրավման ուղղությամբ: Դա հնարավորություն կտա կրթական ծրագրերին համապատասխան դասախոսական կայուն կազմ ապահովել: Մտահոգիչ է մասնագիտական հատուկ մոդուլների բաշխման ծանրաբեռնվածությունը երկու մասնագիտություններում, քանի որ դա կարող է խաթարել կրթական ծրագրերի վերջնարդյունքների արդյունավետ ապահովումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը կարևորում է մարդկային ներուժի դասախոսական կազմի զարգացումը և շարունակական կատարելագործումը, այդ ուղղությամբ պարբերաբար իրականացնում է կատարելագործման միջոցառումներ, ինչպես նաև ջանքեր է գործադրում ոլորտի պրակտիկ մասնագետների ներգրավվման և անհրաժեշտ կադրերի կայունության ապահովման ուղղությամբ, իրականացնում է դասախոսների աջակցման, կարիքների վերհանման, գործունեության գնահատման մեխանիզմների բարելավում, փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՊԲՔ-ը բավարարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՊԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր:

ՎՊԲՔ-ն հետազոտությունների ոլորտում իր հետաքրքրություններ և հավակնություններն արտահայտող ընթացակարգ և քաղաքականություն չունի: Սակայն որպես առանձնացված ուղղություն 2023-2028 թթ-ի Զարգացման ծրագրում և ՌԾ-ում սահմանել է «Հետազոտություն և զարգացում, արտաքին կապեր և միջազգայնացում»-ը, որի շրջանակում տեղ են գտել քոլեջի հավակնությունները հետազոտության ոլորտում, մասնավորապես՝ խնդիր է դրվել ամրապնդել գիտություն-կրթություն կապը, նախադրյալներ ստեղծել դասախոսական կազմին և ուսանողներին հետազոտական նախագծերում ընդգրկելու նպատակով, որակավորման բարձրացման դասընթացներ

իրականացնել այս ուղղությամբ, ապահովել դասախոսների և ուսանողների մասնակցությունը քաղաքի, հանրապետության, միջազգային քոլեջների հետազոտական աշխատանքներին, կոնֆերանսներին, սեմինարներին: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ թեև հետազոտության ոլորտում ՌԾ-ով սահմանված միջոցառումները տեղ են գտել քոլեջի Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի, Բաժնի վարիչի, ամբիոնների 2023-2024 թվականների տարեկան աշխատանքների պլանավորման մեջ, այնուամենայնիվ, նշված ուղղություններով միջանկյալ գործողությունները հստակ տեսանելի չեն:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ նաև, որ քոլեջը թեև դեռևս չի սահմանել ըստ մասնագիտությունների հետազոտությունների հստակ ուղղությունները, այդուհանդերձ, կարևորում է հետազոտական աշխատանքների իրականացումը, ինչպես նաև Բուժական կոսմետոլոգիա մասնագիտության շրջանակում իրականացված հետազոտական աշխատանքների համար դասախոսը խրախուսվել է:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ, ՎՊԲՔ-ում առկա են ուսումնական գործընթացի և հետազոտական գործունեության փոխկապակցման որոշակի մեխանիզմներ. օրինակ՝ «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտության ուսանողները հետազոտական աշխատանքի արդյունքում ստեղծել են լոսյոններ, քսուքներ, կոսմետոլոգիական օճառներ, ստեղծելով միջմոդուլային կապ «Ձեռներեցություն» մոդուլի հետ, կատարել են դրանց փաթեթավորում, ստեղծել են սեփական ապրանքանիշը: Ուսանողները հետազոտում են նաև օճառների, լոսյոնների, քսուկների դրական և բացասական ազդեցությունները մաշկի վրա, իրականացնում քսուքների պիտանելիության ժամկետի ստուգում: «Դեղագործություն» բաժնի ուսանողները «Ֆարմակագնոզիա» և «Դեղաբանություն» մոդուլների շրջանակում հավաքում, չորացնում են դեղաբույսեր, չորացված դեղաբույսերից ստեղծում խառնուրդներ, իրականացնում դրանց փաթեթավորում: «Գեներատիվ օրգանների» մոդուլի շրջանակում ուսանողներին հանձնարարվել է բույսը աճեցնել բաժակի մեջ, հետևել աճի ընթացքին, ներկայացնել բույսի խնամքի ողջ ընթացքը: Այնուհետև, ուսանողները ներկայացրել, քննարկել և համեմատել են իրենց աշխատանքների արդյունքները:

Փաստաղթղերի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հետազոտության որոշակի տարեր են պարունակում նաև տարբեր մոդուլների շրջանակներում ուսանողներին հանձնարարվող ռեֆերատները, ինքնուրույն աշխատանքները, պաստառները, պրեզենտացիաները և այլն: Սակայն նշված աշխատանքներում մեծամասամբ առկա չեն ուսանողի ինքուրույն վերլուծությունները, եզրակացությունները և աղբյուրների հիշատակումը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի կողմից այս ուսումնական տարում պլանավորվել են իրականացնել որոշակի հետազոտական աշխատանքներ, ինչպիսիք են՝ շաքարային դիաբետի և հիպերտոնիկ հիվանդությունների վաղ հայտնաբերման նպատակով ազգաբնակչության սկրինինգային հետազոտությունների անցկացումը: Մասնավորապես՝ հիպերտոնիկ հիվանդության հայտնաբերման ուղղությամբ նախատեսվում է իրականացնել հետևյալը՝ 18 տարեկանից բարձր անձանց շրջանում յուրաքանչյուր ուսանող պետք է ընտրի 20 մասնակից, որոնց համար լրացնելու է հարցաթերթիկ, որտեղ նշվելու են մասնակցի տվյալները, ինչպես նաև

հիվանդությունները, գանգատները և օգտագործվող դեղամիջոցները, եթե այդպիսիք կան։ Ուսանողները հետազոտվողների մոտ օրը 3 անգամ պետք է իրականացնեն զարկերակային ճնշման չափում և գրանցեն տվյալները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նշված հետազոտական աշխատանքի սկիզբը տրվել է։ Թեև առկա հետազոտական աշխատանքների մասնավոր օրինակներին, այնուամենայնիվ, փորձագիտական ուսումնասիրությունների համաձայն, քոլեջում ուսումնական գործընթացի և հետազոտական գործունեության փոխկապակցման, ինչպես նաև դասախոսներին և ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու համակարգված և ինստիտուցիոնալ մեխանիզմները դեռևս բացակայում են։

Քոլեջում առկա են նաև դասախոսների հետազոտական գործունեության մասնավոր օրինակներ, օրինակ՝ որոշ դասախոսներ ունեն մասնագիտական ձեռնարկներ, բրոշյուրներ։ Մասնավորապես "Ներքին հիվանդություններ" ուսումնական ձեռնարկը, "Ստոմատոլոգիական հիվանդություններ" ուսումնամեթոդական ուղեցույցը, "Մանկաբարձություն ուսումնամեթոդական ձեռնարկը և այլն։ Այդուհանդերձ, քոլեջում դասախոսների հետազոտական գործունեության ծավալման քաղաքականություն և ընթացակարգեր առկա չէ։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ հետազոտությունը և զարգացումը քոլեջի ռազմավարական ծրագրի տիրույթում է և քոլեջը կարևորում է հետազոտական աշխատանքներում ուսանողներին և դասախոսներին ընդգրկելու անհրաժեշտությունը, ինչպես նաև այն, որ այդ ուղղությամբ իրականացվում և պլանավորված են որոշակի աշխատանքներ։ Այդուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ հետազոտության ոլորտում հստակ քաղաքականության և դրանց ուղղությունների սահմանումը ըստ մասնագիտությունների կնպաստի ուսանողների մոտ վերլուծական կարողությունների զարգացմանը և կրթական ծրագրի վերջնարդյունքների արդյունավետ ապահովմանը։ Դրական է, որ առկա են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման որոշակի մեխանիզմներ, սակայն փորձագիտական խումբը կարևորում է, որ այդ մեխանիզմները կրեն համընդհանուր բնույթ և քոլեջը դիտարկի ուսանողներին տրվող առաջադրանքներում հետազոտական բաղադրիչի առկայությունը բոլոր մասնագիտություններում՝ նպաստելով ուսանողների վերլուծական կարողությունների զարգացմանը։

Փորձագիտական խմբի դիտարկմամբ կարևոր է, որ քոլեջը բարելավի ուսանողների և դասախոսների հետազոտական գործունեության ծավալման, դրանցում ընդգրկման, խրախուսման մեխանիզմներ, ինչը կնպաստի ուսանողների վերլուծական, նորարարական, հետազոտական գործունեության արդյունավետությանը և դասախոսների մասնագիտական կատարելագործմանը։

Փորձագիտական խումբը նաև կարևոր է համարում դասախոսների կողմից իրենց աշխատանքի հետազոտությունների իրականացումը և լավ փորձի հրապարակումը, ինչը կարևոր նախադրյալ է քոլեջի զարգացման համար։

Փորձագիտական խումբը դրական գնահատելով որոշ դասախոսների կողմից ուսումնական ձեռնարկների ստեղծման աշխատանքները, այնուամենայնիվ կարևորում է, որ իրականացվի նաև միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություններ դրանք

տեղայնացնելու և հետազոտական գործունեության միջազգայնացման նպատակով, հատկապես որ միջազգայնացումը քոլեջի ռազմավարական նպատակների տիրույթում է:

Եզրահանգում:Հաշվի առնելով այն, որ ՎՊԲՔ-ում դեռևս սահմանված չեն հետազոտական ոլորտում հետաքրքրություններն ու հավականությունները, հետազոտությունների իրականացման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր, խրախուսման հստակ մեխանիզմներ, հետազոտության և ուսումնառության միջև կապերը և առաջադրանքներում հետազոտական բաղադրիչի կիրառումը դեռևս համընդհանուր բնույթ չի կրում, չեն իրականացվում միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություններ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՊԲՔ-ն չի բավարարում չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՊԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Քոլեջն իր 2023-2028թ. ռազմավարական ծրագրով սահմանել է ուսումնական գործընթացի իրականացման համար նյութատեխնիկական պայմանների բարելավման, կրթական և հետազոտական կարիքներին համապատասխան տեխնոլոգիապես հագեցած, ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայրի ստեղծման խնդիրները: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջը ռազմավարական խնդիրների լուծման նպատակով մշակել է գործողությունների պլան-ժամանակացույց, համաձայն, որի պլանավորել է ձևափոխել շենքային պայմանները, կառուցել թեքահարթակներ, համալրել լսարանները և լաբորատորիաները ժամանակակից գույքով, մուլյաժներով և նորագույն սարքավորումներով, բարելավել գրադարանային պայմանները, սակայն պլան-ժամանակացույցի իրականացման համար ֆինանսական ռեսուրսների բաշխում առկա չէ:

Քոլեջն իր գործունեությունն իրականացնում է 3455.14 քառ.մետր տարածքում, որից անհատույց օգտագործման՝ 2307.48 քառ.մետր, սեփականության իրավունքով՝ 1147.66 քառ.մետր: Քոլեջում առկա են ուսումնական մասնաշենք, լաբորատոր մասնաշենք, մարզադահլիճ, գրադարան-ընթերցասրահ, վարչական աշխատակիցների և ստորաբաժանումների աշխատանքային սենյակներ, «Ընտանեկան բժշկության կենտրոն» (համաբուժարան), կաթսայատուն և պահեստ: Ուսումնական և լաբորատոր մասնաշենքերում առկա է 17 լսարան, լաբորատորիաներ, մասնագիտական կաբինետներ՝ քույրական գործի կազմակերպման, մանկաբուժության, թերապիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի, վիրաբուժության և վերակենդանացման հիմունքների, ինտենսիվ թերապիայի, համակարգչային, բուժական, գեղազարդական կոսմետոլոգիայի և մերսման, դեղաբանության, բուսաբանության և ֆարմակագնոզիայի, անատոմիայի, ֆիզիոլոգիայի,

պոլիմերիզացիայի և ատամնատեխնիկական գործի, գիպսավորման և փայլեցման և այլն: Քոլեջի կաբինետ-լաբորատորիաներում աշխատանքները համակարգում են կաբինետ-լաբորատորիաների վարիչները և լաբորանտները: Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ կաբինետ-լաբորատորիաները հագեցած են մոդուլների և առարկաների ուսումնառության համար անհրաժեշտ դիտողական պարագաներով, մուլյաժներով, սարքավորումներով, գործիքներով, նյութերով, պաստառներով, ինչպիսիք են. մարդու կմախքի մոդել և ոսկրերի հավաքածու, ներքին օրգանների մոդելներ, մանրադիտակներ, վիրաբուժական գործիքներ, սիրտ-թոքային վերակենդանացման մանեկեններ և սարքավորումներ /մանկական, մեծահասակների/, ներերակային, միջմկանային և ենթամաշկային ներարկումների մուլյաժներ, կոսմետոլոգիական կոմբայն, ատամնատեխնիկական սեղաններ, նյութեր և գործիքներ և այլն: Այսուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի մասնագիտական կաբինետներն ունեն նյութերի և գործիքների թարմացման և համալրման կարիք, մասնավորապես «Ատամնատեխնիկական գործ» և «Դեղագործություն» մասնագիտությունների համար:

Համակարգչային լաբորատորիայում առկա է 22 համակարգիչ և պրոյեկտորներ: Քոլեջի լսարաններում հասանելի է ինտերնետ կապ, ինչը հնարավորություն է տալիս դասավանդողներին ուսումնական գործընթացում ցուցադրել տեսանյութեր և այլն:

Քոլեջն ունի մարզադահլիճ, որը համալրված է մի շարք սպորտաձևերի մարզագույքով, մասնավորապես. բասկետբոլի, թենիսի, մարմնամարզության և շախմատի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ֆիզիկական դաստիարակության պարապմունքների մի մասը անցկացվում են բակում, որտեղ ուսանողները վարժանք են կատարում, մարզվում և նորմատիվներ են հանձնում: Քոլեջը չունի սննդի կետ:

Ուսումնական միջավայրի ստեղծմանը նպաստում են նաև քոլեջի լսարանների, լաբորատորիաների և միջանցքների ձևավորումը ստենդներով և պաստառներով, օրինակ.բուժքրոջ և ատամնատեխնիկի աշխատանքները ըստ փուլերի ներկայցնող «Քույրական գործընթացի կառուցվածքը» և «Լրիվ և միաձնոտային շարժական պրոթեզների պատրաստման լաբորատոր աշխատանքներն ըստ էտապների, անհրաժեշտ ատամնատեխնիկական սարքերի և նյութերի օգտագործումը» ստենդները և այլն:

Քոլեջում գործում է «Ընտանեկան բժշկության կենտրոն»-ը, որի մասնագիտական կաբինետների՝ վիրաբուժական, սրտաբանական, սոնոգրաֆիայի, ռենտգեն և այլնի ռեսուրսները օգտագործվում են ուսումնական գործընթացի կազմակերպման և մասնագիտական մոդուլների ուսումնառության նպատակով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը գործնական պարապմունքների և պրակտիկաների անցկացման նպատակով օգտագործում է տարածաշրջանի գործընկեր բուժհաստատությունների, դեղատների, կոսմետոլոգիական կենտրոնների, ատամնաբուժարանների և ատամնատեխնիկական լաբորատորիաների ռեսուրսները, մասնավորապես՝ «Վանաձորի բժշկական կենտրոն»-ի, Ամալյա Կարապետյանի անվան ծննդատան և այլն:

Քոլեջի գրադարանային ֆոնդը կազմում է 26241 անուն գիրք, որից 14790 մասնագիտական, 2617 ուսումնամեթոդական ձեռնարկ, 764 ուսումաօժանդակ գրականություն, 7865 գեղարվեստական գրականություն, 205-ը դասագրքեր

/հանրակրթական/։ Գրադարանում առկա է ինչպես հայալեզու, այնպել էլ ռուսերեն և անգլերեն լեզուներով ձեռնարկներ և դասագրքեր։ Գրադարանին կից կա գրապահոց, գրադարանի տարածքում գործում է նաև 14-15 հոգու համար նախատեսված ընթերցասրահ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գրադարանավարը իր աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծել է գրքային ֆոնդի տվյալների էլեկտրոնային բազա, որում նշված է գրքերի ընդհանուր քանակը, դասակարգումը ըստ ոլորտների, գրքի անվանումը և հերթական համարը գրապահոցում։

Քոլեջում 2021 թվականից գործում է «Ֆինանսների տնօրինման» ընթացակարգ, որում ներառված են ֆինանսների տնօրինման նպատակները, խնդիրները, քաղաքականությունը և սահմանված են ֆինանսական ռեսուրսների պլանավորման և բաշխման հիմնական սկզբունքները։ Քոլեջի բյուջեն ձևավորվում է պետպատվերով սովորող ուսանողների ծախսերի հատուցումից (64%), վճարովի համակարգում սովորող ուսանողների վարձավճարներից (25%) և այլ մուտքերից (11%), որի 87%-ը ուղղվում է աշխատավարձների վճարմանը, 1,12%-ը պրակտիկաների կազմակերպմանը, 1,67%-ը ուսումնական և լաբորատոր սարքավորումների, նյութերի ձեռքբերմանը, 0,19 %-ը դասախոսների մասնագիտական զարգացմանը և այլն։ Ֆինանսական կայուն հոսքերի ապահովումը և նյութատեխնիկական բազայի շարունակական զարգացումը՝ քոլեջի ռազմավարական նպատակներից է։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ֆինանսական միջոցները դեռևս սուղ են, նյութատեխնիկական բազայի զարգացումը քոլեջն ապահովում է հնարավորության սահմաններում սեփական ֆինանսական միջոցներով, ինչպես նաև նվիրատուների և հովանավորների շնորհիվ, օրինակ՝ «Էբթ Էսոուշիրթս Ինք» ընկերության հայաստանյան գրասենյակի, որը նվիրաբերել է համակարգչային տեխնիկա և մուլյաժներ։ Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջը չի հաշվարկել յուրաքանչյուր կրթական ծրագրի համար անհրաժեշտ ֆինանսական նվազագույն միջոցները։ Նյութատեխնիկական բազայի համալրումն իրականացվում է ստորաբաժանումների կողմից ներկայացված զեկուցագրերի հիման վրա հաշվի առնելով նոր ընդունված ուսանողների թիվը և առկա ռեսուրսների քանակը։ Փորձագիտական ուսումնասիրություններից և այցի շրջանակներում իրականացված դասալսումներից պարզ դարձավ, որ քոլեջում գործող «Ընտանեկան բժշկության կենտրոն»-ի և տարածաշրջանի բժշկական կենտրոնների ռեսուրսները հասանելի են ուսանողների, դասավանդողների համար և լայնորեն կիրառվում են պարապմունքների ժամանակ։

Քոլեջն ունի պաշտոնական էլեկտրոնային փոստ՝ vanmedcollege@bk.ru, որը ծառայում է որպես արտաքին և ներքին փաստաթղթաշրջանառության հարթակ, ինչպես նաև գործում է էլեկտրոնային Mulberry համակարգը, որի միջոցով իրականացվում է արտաքին փաստաթղթաշրջանառություն ԿԳՄՍ նախարարության և քոլեջի միջև։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ստորաբաժանումների միջև ներքին փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ ներդրված չէ։ Քոլեջում տեղեկատվության և ներքին փաստաթղթաշրջանառության արխիվացման գործընթացը իրականացնում է կադրերի տեսուչը «Արխիվի գործունեության կազմակերպման» կանոնակարգի համաձայն, ըստ որի սահմանվում են արխիվի խնդիրները, գործառույթները, պատասխանատվության շրջանակը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում արխիվը պահպանելու

համար հատկացված է հատուկ տարածք, ուր համակարգված եղանակով պահվում են բոլոր փաստաթղթերը, անձնական գործերը, դասամատյանները և այլն։

Քոլեջում հաշվապահությունն իրականացվում է ՀԾ Հաշվապահ-7 ծրագրով, որն ապահովում է հաշվապահական հաշվառման ամբողջական ավտոմատացումը:

Քոլեջում ուսանողների և աշխատակիցների առաջին բուժօգնությունը ապահովում է «Ընտանեկան բժշկական կենտրոն»-ի աշխատակազմը յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 9-17-ը։ Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ «Ընտանեկան բժշկական կենտրոն»-ում առկա է անհրաժեշտ դեղորայք և պայմաններ առաջին օգնություն ցուցաբերելու համար։

ՄՈՒՀ-ում անվտանգ միջավայր ապահովելու նպատակով գործում է պահակակետ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի տեսանելի վայրերում փակցված են տարհանման պլաններ, առկա է հակահրդեհային պաշտպանության միջոցներ ինչպես ուսումնական մասնաշենքերում, այնպես էլ բակում։ Ուսումնական մասնաշենքն ունի 4 մուտք, որոնցից մեկն ապահովված է թեքահարթակով ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ներքին շահակիցների շրջանում հատուկ կարիք ունեցող ուսանողներ և դասախոսներ չկան։ Քոլեջի լաբորատորիաներում փակցված են անվտանգության պահպանման կանոնները, որոնց մասին լաբորանտները իրազեկում են ուսանողներին։ Միաժամանակ, քոլեջը, լսարաններում և միջանցքներում փակցված պաստառների և ստենդների միջոցով, ապահովում է ուսանողներին առողջության և անվտանգության պահպանման վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը. օրինակ, «Զգոն եղիր», «Զգուշացի՛ր և պահպանի՛ր առողջությունդ», «Եթե տեղի է ունեցել դժբախտ պատահար» և այլն։

Քոլեջում 2022 թ. մշակվել և գործարկվում է «Ուսանողների կողմից կրթական ծառայությունների և ուսումնական գործընթացի գնահատման» կանոնակարգ, որում ներկայացված են կրթական գործընթացի որակի ներքին գնահատման ուղղությունները, ընթացակարգը։ Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների բավարարվածությունը քոլեջի տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության վերաբերյալ բացահայտում են անցկացվող հարցումների միջոցով, որոնց արդյունքները վերլուծվում են ՈԱ աշխատակիցների կողմից։ Մասնավորապես, 2023թ. իրականացվել է առցանց հարցում, որի ընթացքում ուսանողները 5 բալային համակարգով գնահատել են քոլեջի լսարանների, լաբորատորիաների հագեցվածությունը, դասավանդման ընթացքում դիտողական պարագաների, տեխնիկական միջոցների, մասնագիտական գործիքների և սարքերի կիրառումը։ Հարցման արդյունքներով ուսանողները քոլեջի նյութատեխնիկական ապահովվածությունը գնահատել են հիմնականում բավարար, գոհունակություն են հայտնել դասերին պաստառների, մուլյաժների և տեխնիկական միջոցների օգտագործումից, դժգոհություն են հայտնել սննդի կետի և հանրակացարանի բացակայությունից։

Քոլեջի դասավանդողների տրամադրվող ռեսուրսների կիրառելիության և արդյունավետության վերաբերյալ կարիքների վերհանումը իրականացվում է բանավոր կերպով ամբիոնների և կաբինետների վարիչների, լաբորանտների միջոցով։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերհանվել են նյութատեխնիկական բազայի

արդիականացման, նորագույն սարքավորումների և տեխնոլոգիաների անհրաժեշտության վերաբերյալ տվյալներ։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջն ունի համապարփակ ռազմավարական ծրագիր՝ ուղղված կրթական գործընթացի, մասնավորապես նյութատեխնիկական ռեսուրսների բարելավմանը։ Գովելի է, որ գործողությունների պլան-ժամանակացույցը ներառում է տարբեր ասպեկտներ, շենքային պայմանների փոփոխություններ՝ հասանելիության համար թեքահարթակներ կառուցելով, որը հնարավորություն կտա հատուկ կարիք ունեցող ուսանողներին ներգրավել կրթական գործընթացներում։ Դասասենյակների և լաբորատորիաների արդիականացումը կբարձրացնի կրթական գործընթացի արդյունավետությունը։

Փորձագիտական խումբը կարևորում է այն հանգամանքը, որ քոլեջը սեփական ռեսուրսներից բացի պայմանագրերի շրջանակում՝ բավական լայն հնարավորություններ ունի գործընկեր կազմակերպությունների ռեսուրսների կիրառման համար, ինչը նպաստում է ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջի կաբինետ-լաբորատորիաները հագեցած են մոդուլների և առարկաների ուսումնառության համար անհրաժեշտ դիտողական պարագաներով, մուլյաժներով և սարքավորումներով, այնուամենայնիվ, փորձագիտական խումբը կարևորում է նյութերի և գործիքների թարմացման և համալրման անհրաժեշտությունը հատկապես «Ատամնատեխնիկական գործ» և «Դեղագործություն» մասնագիտություններին վերաբերող մասնագիտական կաբինետներում, ինչը հնարավորություն կտա քոլեջին աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստմանը։

Գովելի է քոլեջում ինտերնետ կապի հասանելիությունը, ինչը հնարավորություն է տալիս դասախոսներին տեխնոլոգիաների կիրառմամբ կազմակերպել ուսումնական գործընթացը։

Դրական է, որ քոլեջում գործում է «Ընտանեկան բժշկության կենտրոն»-ը և օգտագործվում է կրթական նպատակներով, մասնավորապես գործող մասնագիտական կաբինետների առկայությունը հնարավորություն է տալիս համադրել ուսումնական գործընթացը աշխատանքային միջավայրի հետ։ Կենտրոնում ուսանողները և դասախոսները միաժամանակ ստանում են անվճար բժշկական օգնություն։

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջն ունի ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն, միևնույն ժամանակ նշում, որ քոլեջը պետք է քայլեր ձեռնարկի ֆինանսական մուտքերի բազմազանեցման ուղղությամբ, ինչը նաև կօգնի ռազմավարական ծրագրով սահմանված նպատակների իրագործմանը։

Դրական է, որ քոլեջում տեղեկատվության տարածման և ներքին փաստաթղթաշրջանառության գործընթացները ունեն համակարգված բնույթ, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջում ներքին փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրումը կնպաստի գործընթացների կանոնակարգմանը և ստորաբաժանումների միջև արդյունավետ համագործակցությանը։

Փորձագիտական խմբի կողմից կարևորվում է քոլեջի իրականացրած գործընթացները՝ ուղղված ուսանողների առողջության պահպանմանն ու անվտանգ միջավայրի ձևավորմանը։ Դրական է նաև լաբորատորիաներում անվտանգության

ապահովման նպատակով քոլեջի իրականացրած ակտիվ քայլերը, մասնավորապես՝ տեղադրելով անվտանգության կանոնները լաբորատորիաներում և տարածելով առողջության ու անվտանգության մասին տեղեկատվություն տարբեր ուղիներով, քոլեջն ընդգծում է ուսանողների առողջության և անվտանգության առաջնահերթության կարևորությունը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում առկա են ուսանողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման հստակ գործիքներ, ինչպես նաև իրականացվում են տվյալների վերլուծություններ, ինչը նպաստում է ռեսուրսների շարունակական բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն ապահովված է ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային բազայով, շարունակաբար ջանքեր է գործադրում դրանք համալրելու, առկա է ռեսուրսներին հասանելիություն ՄԿԾ-ների իրականացման համար, կանոնակարգված են տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացները, ապահովել է անվտանգ միջավայր՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՊԲՔ-ը բավարարում է չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՊԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

Հասարակական պատասխանատվությունը ՎՊԲՔ-ի 2023-2028 թվականների ՌԾ-ի ռազմավարական նպատակների տիրույթում է, որի իրականացման համար նախատեսված են համապատասխան միջոցառումներ, ինչպես նաև քոլեջն ունի 2018 թվականի հունվարին հաստատված «Ուսումնակազմակերպչական աշխատանքների, լրատվության հասարակության հետ կապերի ստորաբաժանման» կանոնակարգ, որի գործառույթների շրջանակում են քոլեջի հասարակական պատասխանատվությունը, թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Քոլեջն ունի նաև «ՎՊԲՔ-ի ուսումնակազմակերպչական աշխատանքների, լրատվության հասարակության հետ կապերի ընթացակարգ», որը սահմանում է քոլեջի գործունեության լուսաբանման, հասարակական կարծիքի ձևավորման և հետադարձ կապի հաստատման մեխանիզմներն ու գործիքակազմը:

ՎՊԲՔ-ում առկա է արտաքին և ներքին հաշվետվողականության սահմանված կարգ: Ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջի հիմնական հաշվետու փաստաթուղթը տարեկան հաշվետվությունն է. յուրաքանչյուր տարվա ավարտին տնօրենը Կառավարման բարձրագույն մարմնին՝ Կառավարման խորհրդին է ներկայացնում տարեկան հաշվետվություն՝ ներքին գնահատման տեղեկանք, որն իր մեջ ներառում է քոլեջի գործունեության գրեթե բոլոր բնագավառները և առկա հիմնախնդիրները: Տարեկան

հաշվետվությունը կազմված է տարբեր ստարբաժանումների հաշվետվությունների հիման վրա: Քոլեջը արտաքին հաշվետվություններ է ներկայացնում նաև ԿԳՄՍ նախարարությանը, Պետեկամուտների կոմիտեին, Ազգային վիճակագրական ծառայությանը, Տեսչական մարմնին և այլն: Ինքնավերլուծության համաձայն, ինչպես նաև փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը պատրաստվում է առաջիկայում իրականացնել ներքին աուդիտ՝ համարելով դա թափանցիկության ապահովման գործիք: Քոլեջում առկա է ներքին հաշվետվողականության հետևյալ կարգը՝ ամբիոնները և կառուցվածքային այլ օղակները իրենց հաշվետվությունները ներկայացնում են Մանկավարժական խորհրդին: Հաշվետվությունները կազմվում են ըստ պլանավորված և իրականացված աշխատանքների: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ոչ բոլոր հաշվետվություններն են պարունակում վերլուծական բաղադրիչ, հաճախ դրանք քանակական տվյալներ են: Այդուհանդերձ, փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հաշվետվությունների ներկայացման գործընթացը քոլեջում ընթանում է բավականին կանոնակարգված, հաշվետվությունների քննարկումներն ընդգրկում են քոլեջի գործունեության բոլոր բնագավառները և կատարված աշխատանքների արդյունքները՝ դուրս բերելով առկա թերությունները և բացթողումները, ինչի հիման վրա էլ կայացվում են համապատասխան որոշումներ:

Քոլեջի գործունեության լուսաբանման մեխանիզմները, կազմակերպվող միջոցառումների մասին իրազեկման տարբեր գործիքակազմի կիրառումը սահմանված են «ՎՊԲՔ-ի ուսումնակազմակերպչական աշխատանքների, լրատվության հասարակության հետ կապերի ընթացակարգ»-ում: ՎՊԲՔ-ն ունի տեղեկատվության հասանելիությունն ու թափանցիկությունը ապահովող հարթակ՝ ֆեյսբուքյան էջ, որտեղ լուսաբանվում է քոլեջի առօրյան, զետեղվում են թափուր աշխատատեղերի համալրման հայտարարություններ, առողջապահական ոլորտի նորարություններ, մարդու առողջությանը վերաբերվող տեղեկատվություն, քոլեջի մասնագիտությունների նկարագրերը և այլն: Քոլեջը դեռևս պաշտոնական կայքէջ չունի, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ստեղծման աշխատանքները ընթացքի մեջ են: Քոլեջի գործունեության տեղեկատվության տարածման գործիքներից է Մասնագիտական կողմանորոշման խորհուրդը, որը այցելություններ է իրականացնում մարզի և քաղաքի դպրոցներ՝ քոլեջի մասին տեղեկատվությունը տարածելու նպատակով: Մասնագիտական կողմնորոշման նպատակով Քոլեջում կազմակերպվում են նաև բաց դռների օրեր: Քոլեջի գործունեության թափանցիկության և տեղեկատվության հասանելիության ապահովման գործիքներից է նաև ծնողների և գործատուների ընդգրկվածությունը Որակի ապահովման հանձնաժողովներում, որի աշխատանքների շրջանակում գործատուները և ծնողներները տեղեկանում են նաև քոլեջի գործընթացներին: Հանձնաժողովի աշխատանքների շրջանակում կազմակերպվել է հանդիպում-քննարկում գործատուների և ծնողների հետ, որի ժամանակ քննարկվել են քոլեջի ռազմավարական ուղղությունները, առաքելությունը, համագործակցության խոչընդոտները, արտաքին շահակիցներին որակի ապահովման գործընթացներում ներգրավելու կարևորությունը:Ծնողների և գործատուների ընդգրկվածությունը Որակի ապահովման հանձնաժողովներում նաև հետադարձ կապի և քոլեջի գործունեության թախանցիկության ապահովման գործիք է: ՎՊԲՔ-ում տեղեկատվության ապահովման գործիք են հանդիսանում նաև բուկլետները, ԶԼՄ-ներում

տրվող հայտարարությունները, քոլեջի ներսում հայտարարությունների համար նախատեսված ցուցատախտակները, ինչպես նաև հանդիպում-քննարկումները քոլեջի տնօրենի և ուսանողների, ծնողների միջև:

«ՎՊԲՔ-ի ուսումնակազմակերպչական աշխատանքների, լրատվության և հասարակության հետ կապերի ընթացակարգ»-ի համաձայն սահմանված են հասարակական կարծիքի ձևավորման և հետադարձ կապի հաստատման մեխանիզմներն ու գործիքակազմը: Ըստ ընթացակարգի՝ հետադարձ կապի ապահովման գործիքներն են սոցիալական ցանցերը, առցանց հարցումները արտաքին և ներքին շահակիցների համար: Կարիերայի պատասխանատուն կազմակերպում է առցանց հարց ու պատասխան, որի ժամանակ պատասխանում է դիմորդների, ծնողների հարցերին՝ տրամադրելով քոլեջի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն: Փորձագիտական ուսումնասիրությունների համաձայն՝ հասարակության հետ հետադարձ կապի ապահովման հիմնական գործիքը քոլեջի ֆեյսբուքյան էջն է: Հետադարձ կապի ապահովման օրինակ է նաև քոլեջ-գործատու սերտ համագործակցությունը: Գործատու կազմակերպությունների ներկայացուցիչները ընդգրկված են քոլեջի Կառավարման խորհրդում: Գործատուների հետ հետադարձ կապը պահպանվում է նաև Պրակտիկայի ղեկավարի կողմից: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ սերտ է համագործակցությունը ծնողների հետ, որոնց հետ կապն ապահովվում է Դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի և կուրսղեկների միջոցով:

ՎՊԲՔ-ում ներքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման օրինակ է նաև «Շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքների ուսումնասիրությունը», որի շրջանակում գործատուները ներկայացրել են իրենց արձագանքները ՎՊԲՔ-ի ուսանողների մասնագիտական հմտությունների և կարողությունների, քոլեջի վարկանիշի վերաբերյալ, ինչպես նաև արտաքին շահակիցները ներկայացրել են իրենց առաջարկները: Չնայած առկա տեղեկատվության տարածման գործիքներին, այդուհանդերձ քոլեջը տրամադրվող տեղեկատվությունը գնահատող մեխանիզմներ դեռևս չունի:

Քոլեջում պլանավորվում և իրականացվում են տարբեր թեմաներով ուսումնադաստիարակչական միջոցառումներ և աշխատանքներ՝ էքսկուրսիաներ, սպորտային և արտալսարանային միջոցառումներ, ճանաչողական այցեր, խմբակներ, կլոր-սեղաններ, բաց դասեր, գրքի ցուցահանդեսներ, քննարկումներ, մասնակցություն մարզային և քաղաքային միջոցառումներին, կամավորական աշխատանքներ, որոնք համակարգվում են Կազմակերպչադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի կողմից: Քոլեջում կազմակերպվում են տարբեր թեմաներով միջոցառումներ նաև գրադարանային խորհրդի կողմից, ինչպես նաև ուսանողները մշտապես ընդգրկվում են գրքերի վերանորոգման աշխատանքներում: Քոլեջի գրադարանից օգտվում են նաև մարզի բուժքույրերը՝ ատեստավորմանը նախապատրաստվելու նպատակով:

Քոլեջն ունի կից համաբուժարան՝ «Ընտանեկան առողջության կենտրոն», որն իրականացնում է շուրջ 1700 քաղաքացիների՝ ինչպես ուսանողներից, այնպես էլ մարզի բնակիչներից բուժսպասարկում, հիվանդների շարունակական վերահսկողություն, հիվանդությունների վաղ հայտաբերում և բուժման կազմակերպում՝ անվճար

բուժօգնություն տրամադրելով առանց տարիքային սահմանափակման, ինչպես նաև ուսանողների պրոֆիլակտիկ քննությունների կազմակերպում, անհրաժեշտության դեպքում կանխարգելիչ պատվաստումներ, քոլեջի և նրա շրջակա տարածքի սանիտարահիգիենիկ վիճակի վերահսկողություն և այլն: Նախկինում քոլեջն իրականացրել է կարաճաժամկետ ծրագրեր՝ «Կրտսեր բուժքույրություն, մերսում և բուժական ֆիզկուլտուրայի հրահանգավորում» և «Կրտեր բուժքույրություն և դիմահարդարում»: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թեև ներկայում կարճաժամկետ ծրագեր չեն իրականացվում, սակայն քոլեջը նախատեսում է դեղագործների, ատամնաբուժարանների բուժքույրերի և կոսմետոլոգների համար կարճաժամկետ ծրագրեր իրականացնել:

Նախկինում քոլեջն ունեցել է պարբերաթերթ՝ «Սպեղանի» գիտամեթոդական հանդեսը, որտեղ լուսաբանվել է քոլեջի անցուդարձը, մարզի առողջապահական, բժշկական խնդիրները: Պարբերաթերթը հասարակության շրջանում գիտելիքներ է տարածել մարդու առողջության վերաբերյալ: Ներկայումս պարբերաթերթն այլևս չի հրատարակվում՝ ֆինանսական խնդիրներով պայմանավորված:

Կարիերայի ուղղորդման և աջակցման պատասխանատուն պարբերաբար կազմակերպում է ուսանողների մասնակցությունը աշխատանքի տոնավաճառներին, սեմինարներին, աշխատաժողովներին, ցուցահանդեսներին:

ՎՊԲՔ-ում հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման մեկ այլ գործիք է քոլեջի համագործակցությունը Կարմիր խաչի հետ, որի շրջանակում անցկացվել է դասընթաց հիվանդների և ծերերի խնամքի վերաբերյալ, բուժքույրերի միջազգային օրվա կապակացությամբ քոլեջի ուսանողները հրավիրվել են և մասանկցել են որպես դոնորներ:

Քոլեջի ուսանողական խորհուրդը Լոռու տարածաշրջանային պետական քոլեջի հետ համագործակցության արդյունքում իրականացրել է մեդիագրագիտության վերաբերյալ դասընթաց, 44-օրյա պատերազմի ժամանակ ՎՊԲՔ-ի ուսանողները իրենց աջակցությունն են ցուցաբերել մարզի բժշկական կենտրոններին, ուսանողները կազմակերպում են նաև կամավոր շաբաթօրյակներ, օգնում գրադարանի աշխատանքներին: ՎՊԲՔ-ի ուսանողները Արարատի բժշկական քոլեջի հետ համագործակցության արդյունքում այցելել են այնտեղ և վերջիններիս համար կազմակերպվել է դասընթաց՝ առաջին բուժօգնության թեմայով, ինչպես նաև իրենք ՎՊԲՔ-ի ներսում միջոցառում են կազմակերպել Արարատի և Գավառի բժշկական քոլեջների ուսանողների համար «Ճանապարհորդություն երջանկության աշխարհով» խորագրով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը այս ուսումնական տարում նախատեսել է մանկապարտեզներում դասընթացներ իրականացնել հիգիենայի պահպանման թեմայի շուրջ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևորում է, որ հասարակական պատասխանատվությունը, գործընթացների թափանցիկությունն ու տեղեկատվության հասանելիությունը քոլեջի ռազմավարական թիրախում են: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՎՊԲՔ-ի արտաքին և ներքին հաշվետվողականության ձևավորված և գործող մեխանիզմների առկայությունը, ինչը նպաստում է քոլեջի գործունեության թափանցիկությանն ու գործընթացների վերաբերյալ տեղեկատվության տարածմանը շահակիցների շրջանում: Դրական է Մանկավարժական խորհդի նիստերին

հաշվետվությունների քննարկման և հրապարակման կանոնակարգված գործընթացը, ինչը նպաստում է առկա խնդիրների բացահայտմանը, լավագույն փորձի վերհանմանը: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը կարևորում է, որ հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի կիրառումը դրվի ինստիտուցիոնալացված հիմքի վրա, քանի որ դա հիմքեր կստեղծի նաև քոլեջի գործունեության ինքնագնահատման կայուն և արդյունավետ մեխանիզմների ապահովման համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, քոլեջի գործընթացների վերաբերյալ տեղեկատվության տարածման և հասանելիության, հետադարձ կապի մեխանիզմների առկայությունը, մասնավորապես ֆեյսբուքյան էջը, տեղեկատվության լուսաբանման տարբեր գործիքները, առցանց հարց ու պատասխանները, տարբեր հարցումները արտաքին և ներքին շահակիցների շրջանում, վերջիններիս ընդգրկվածությունը տարբեր Որակի ապահովման հանձնաժողովներում, քոլեջ-գործատու սերտ կապ, ինչը թույլ է տալիս բացահայտել և գնահատել շահակիցների կարիքները: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի պաշտոնական կայքէջի գործարկումը կնպաստի կրթական ծրագրերի, շրջանավարտների, համագործակցությունների և այլ գործընթացների վերաբերյալ առավել ընդլայնված տեղեկատվության և հետադարձ կապի ապահովմանը: Փորձագիտական խումբը նաև կարևորում է, որ քոլեջը տեղեկատվության հասանելիության, թափանցիկության և հետադարձ կապի արդյունավետության գնահատման մեխանիզմներ ներդնի, քանի որ դա թույլ կտա տեղեկատվության գնահատման կայուն և արդյունավետ գործիքակազմ ունենալ: Գովելի է, որ քոլեջի ներկայացուցիչների կողմից մշտապես կարևորվում է հասարակության համար արժանի անձի և քաղաքացու ձևավորումը, բարոյական և մշակութային արժեքների փոխանցումը և պահպանումը սերունդների համար, ինչին էլ ուղղված են քոլեջում կազմակերպվող տարբեր թեմաներով միջոցառումները և ուսանողների շարունակական ընդգրկվածության ու մասնակցության ապահովումը արատալսարանային միջոցառումներին:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը տարիների ընթացքում իրականացնում է հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման գործընթացներ, մասնավորապես կից 'Ընտանեկան առողջության կենտրոն'-ի աշխատանքները և «Սպեղանի» պարբերաթերթը, որը տարիներ շարունակ հասարակության շրջանում գիտելիքներ է տարածել մարդու առողջության վերաբերյալ: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ կարճաժամկետ ծրագրերի վերագործարկումը կնպաստի քոլեջի հասարակական պատասխանատվության առավել բարձրացմանը, քանի որ հաստատության դերը մեծ է մարզի առողջապահական ոլորտի կադրերի պատրաստման և աշխատաշուկայի սպասարկման գործում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՎՊԲՔ-ն ունի ներքին և արտաքին հաշվետվողականության ձևավորված որոշակի համակարգ, ապահովում է հասարակությանը տեղեկատվության հասանելիությունը և թափանցիկությունը, ունի հասարակությանը գիտելիքի և արժեքների փոխանցման փորձառություն և մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՊԲՔ-ն բավարարում է չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՊԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է բավարար:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր:

Քոլեջն իր 2023-2028 ՌԾ -ում ռազմավարական նպատակ է սահմանել տեղական և միջազգային կրթական հաստատությունների հետ համագործակցության շարունակումը և կատարելագործումն, ինչպես նաև վեր է հանել ուսանողների և աշխատակիցների օտար լեզուների իմացության, ՀՀ և միջազգային կառույցների հետ արդյունավետ համագործակցության և փորձի փոխանակման, միջազգային ծրագրերին քոլեջի շահակիցների մասնակցության և այլ խնդիրներ: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջը ռազմավարական խնդիրները լուծելու նպատակով պլանավորել է մշակել արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող ընթացակարգեր և մեխանիզմներ (2025 թ.-ին է նախատեսվում իրականացնել), իրականացնել թվով 10 օտար լեզվի դասընթաց աշխատակիցների և ուսանողների համար (2023-2028 թթ-ին է նախատեսվում իրականացնել), մասնակցել միջազգային ծրագրերին (2026թ.-ին է նախատեսվում իրականացնել), ապահովել միջազգային լավագույն փորձի տեղայնացումը (2026թ.-ին է նախատեսվում իրականացնել): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն իրականացրել է օտար լեզվի դասընթացներ, սակայն դեռևս աշխատանքներ չեն տարվել միջազգային ծրագրերին մասնակցության և միջազգային փորձի ուսումնասիրման ուղղությամբ, ինչպես նաև չեն մշակել արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող ընթացակարգեր և մեխանիզմներ:

Քոլեջը չունի արտաքին կապերի պատասխանատուի հաստիք, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս ուղղությամբ աշխատանքներն իրականացնում են պրակտիկայի բաժնի վարիչը, կադրերի տեսուչը, կարիերայի պատասխանատուն, որակի ապահովման պատասխանատուները և տնօրենը: Քոլեջը համագործակցում է հանրապետության միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների, առողջապահական, դեղագործական, հասարակական կազմակերպությունների և կոսմետոլոգիական կենտրոնների հետ. մասնավորապես, Երևանի հենակետային բժշկական քոլեջի, Արարատի պետական բժշկական քոլեջի, Գավառի պետական բժշկական քոլեջի, Գյումրու պետական բժշկական քոլեջի, Վանաձորի բժշկական կենտրոնի, Վանաձորի պետական համալսարանի, Հայկական Կարմիր Խաչ ընկերության Լոռու մարզային մասնաճյուղի, «Հայկական կարիտաս» ՀԿ-ի, «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի հետ: Համագործակցություններն իրականացվում են պայմանագրերի, համաձայնագրերի և հուշագրերի հիման վրա, որոնց շրջանակներում, մեթոդական և մասնագիտական փորձի

փոխանակման նպատակով, կազմակերպվում են ուսուցողական և ճանաչողական այցեր, կլոր սեղան քննարկումներ, համատեղ միջոցառումներ և այլն: Մասնավորապես, 2019-2022թթ. ՎՊԲՔ-ի 20 դասախոսներ մասնակցել են Վանաձորի պետական համալսարանի կրթական բարեփոխումների վերաբերյալ վերապատրաստման դասընթացներին, քոլեջի ուսանողները մասնակցել են Հայկական Կարմիր Խաչի իրականացրած մի շարք դասընթացների և սեմինարների, մասնավորապես հիվանդների, ծերերի խնամքի վերաբերյալ: Քոլեջը համագործակցում է տարածաշրջանի գործատուների հետ (Վանաձորի բժշկական կենտրոն, թիվ 3 համաբուժարան, թիվ 5 համաբուժարան, դեղատուն «Հ.Դիլանյան»,Գուգարքի ԱԱՊԿ, Լոռու մարզի նյարդահոգեբանական դիսպանսեր, Վանաձորի կայազորի հոսպիտալ, «Լոռի Մեդ» բժշկական կենտրոն ՍՊԸ, Վանաձորի թիվ 2 ստոմատոլոգիական պոլիկլինիկա և այլն), ինչի արդյունքում կարողանում է կազմակերպել ուսանողների պրակտիկաները, դասավանդման գործընթացում ներգրավել գործատու-դասախոսների, աջակցել շրջանավարտների աշխատանքի տեղավորմանը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տեղական կազմակերպությունների հետ քոլեջի համագործակցությունների մի մասն ինստիտուցիոնալ մակարդակում են (պրակտիկայի կազմակերպումը և ռեսուրսների համատեղ կիրառումը), որոշները հատվածային են (1 օրյա այց Երևանի Միքայելյանի անվան համալսարանական հիվանդանոց՝ ժամանակակից ախտորոշիչ հետազոտություններին ծանոթանալու նպատակով), կան նաև պայմանագրեր որոնք կնքվել են 2023 թ. («Հայկական կարիտաս» ՀԿ-ի, «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի հետ), որոնց շրջանակներում համագործակցությունը դեռ կայացման փուլում է:

Քոլեջը թեև միջազգային կառույցների և կազմակերպությունների հետ կայացած համագործակցություններ չունի, այնուամենայնիվ այդ ուղղությամբ որոշակի քայլեր իրականացրել է. մասնավորապես, 2023 թ. համագործակցության հուշագիր է կնքել Փարիզի «Հայդաս» վարժարանի հետ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ֆրանսերեն լեզվի առցանց դասընթացներ ուսանողների և դասախոսամանկավարժական կազմի համար, ինչպես նաև մասնագիտական առցանց վերապատրաստումներ քոլեջում դասավանդող բժիշկների և բուժքույրերի համար, պարբերաբար մասնակցել է «Էրազմուս +» ծրագրի կազմակերպած քննարկումներին: 2023թ. ֆրանսիայի Լիոն քաղաքի «Ռոնի մասնագիտական կրթական կենտրոնի» ներկայացուցիչները այցելել են ՎՊԲՔ և քննարկել հետագա համագործակցության հնարավորությունները:

Միջազգային դաշտում որակի ապահովման գործընթացներին տեղեկանալու, դրական փորձի ընդօրինակման և կապերի ընդլայնման նպատակով՝ քոլեջի կրթության որակի պատասխանատուների նախաձեռնությամբ և «Եվրոպական կրթական հիմնադրամի» (ETF) աջակցությամբ 2023թ. մայիսին քոլեջն իրականացրել է «Արտաքին և ներքին շահակիցների դերը ՄԿՈՒ հաստատություններում/ավագ դպրոցներում» առցանց կոնֆերանս, որին մասնակցել են միջին մասնագիտական և ավագ դպրոցների ներկայացուցիչներ արտերկրից (Սիրիա, Պաղեստին, Ֆիլիպիններ, Իտալիա, Իսպանիա և այլն) և հայաստանյան քոլեջներից:

Ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջի դասավանդողների 96 % -ը , վարչական աշխատակիցների 100 % -ը, ուսանողների մոտ 95 % տիրապետում են օտար լեզուների/ անգլերեն և ռուսերեն/, միևնույն ժամանակ, քոլեջի դիտարկմամբ անգլերեն լեզվի

իմացությամբ աշխատակազմի սակավությունը և ուսանողների օտար լեզուների իմացության ոչ բավարար մակարդակը քոլեջի թույլ կողմերն են: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջը քայլեր է ձեռնարկում աշխատակազմի և ուսանողների օտար լեզվի իմացությունը բարձրացնելու ուղղությամբ. մասնավորապես, օտար լեզվի դասախոսները 2 դասընթաց են անցկացրել թվով 30 աշխատակիցների համար, որի համար խրախուսվել են քոլեջի կողմից դրամական պարգևատրմամբ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը կարևորում է տեղական և միջազգային կրթական հաստատությունների հետ համագործակցության կատարելագործումը, արտաքին կապերի ստեղծման և միջազգայնացման նպատակով սահմանել է ռազմավարական խնդիրներ և պլանավորել հետագա աշխատանքները: Այսուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը նախատեսված արդյունքներին հասնելու համար սահմանելով կարճաժամկետ պլաններ, կարող է նպաստավոր հիմքեր ստեղծել ռազմավարական խնդիրների լուծման համար:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի արդյունավետ համագործակցությունը տարածաշրջանի գործատուների հետ ռեսուրսների համատեղ օգտագործման, պրակտիկաների կազմակերպման և շրջանավարտների աշխատանքի տեղավորման տեսանկյունից, այսուհանդերձ գտնում է, որ քոլեջի գործատուների ակտիվ մասնակցությունը ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործընթացներում կնպաստի դրանց լավարկմանը: Գովելի է նաև հայաստանյան քոլեջների հետ ՎՊԲՔ-ի համագործակցությունը: Փորձագիտական խումբը գտնում է, որ դրանց արդյունքների հիման վրա բարելավումների իրականացումը կխթանի քոլեջի զարգացումը: Փորձագիտական խմբի դիտարկմամբ, առկա համագործակցությունների արդյունավետության գնահատումը կնպաստի առավել թիրախային համագործակցային հարաբերությունների ստեղծմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է միջազգայնացմանն ուղղված քոլեջի աշխատակիցների որոշակի քայլերի իրականացումը, ինչը կարող է հնարավորություններ ստեղծել փորձի փոխանակման համար: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի կողմից արտաքին կապերի և միջազգայնացմանն ուղղված պատասխանատվության շրջանակի հստակեցումը և գործողությունների համակարգումը կնպաստի միջազգայնացման գործընթացների բարելավմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը շահակիցներին միջազգայնացման գործընթացներում ներգրավման նպատակով պլանավորում է աշխատակիցների և ուսանողների շրջանում օտար լեզուների իմացության մակարդակի բարելավում, ինչը քոլեջի ռազմավարական նպատակների շրջանակում է:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն ունի համագործակցության լայն շրջանակ տարածաշրջանի առողջապահական և ուսումնական հաստատությունների ու կազմակերպությունների հետ, քայլեր է ձեռնարկում միջազգայնացման ուղղությամբ, արտաքին կապերի միջոցով ապահովում է ՄԿԾ-ների արդյունավետ իրականացումը, կարևորում է շահակիցների օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացումը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՊԲՔ-ը բավարարում է չափանիշ 9-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՊԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր:

ՎՊԲՔ-ի 2023-2028 թվականների զարգացման ծրագրի ռազմավարական ուղղությունների շրջանակում առանձնացված է որակի ապահովումը, որի ուղղությամբ սահմանված են համապատասխան խնդիրներ: Առկա է «Որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգ» փաստաթուղթը, որը հաստատվել է 2022 թ-ին: Նշված փաստաթղթում ներկայացված են որակի ապահովման հասկացությունների բացատրագիրը, սկզբունքները, նպատակներն ու խնդիրները, ընթացակարգերը, այդ թվում՝ որակի ներքին համակարգի վերանայման ընթացակարգը, գործիքներն ու մեխանիզմները: Քաղաքականության մեջ կարևորվում է ՊԻԳԲ շրջափուլի ապահովումը, ինչպես նաև հիմնավորվում որակի ապահովման քաղաքականության գնահատման համար ցուցիչների անհրաժեշտությունը: Առկա է նաև Որակի ապահովման ձեռնարկը, որը հաստատվել է 2023 թվականի հունվարին: Ձեռնարկում ներկայացված են քաղաքականության հիմնադրույթները, ՊԻԳԲ շրջափուլը, հավատարմագրման չափանիշներն ու չափորոշիչները:

Քոլեջում առկա են նաև որակի ապահվման համակարգը կարգավորող հետևյալ փաստաթղթերը՝ «ՎՊԲՔ Որակի ապահովման հանձնաժողովի կանոնակարգ», «ՎՊԲՔ «Որակի ուսանող-դեսպան» խորհրդի ընտրության և ուսումնական գործունեության կանոնակարգ», «ՎՊԲՔ ուսանողների կողմից կրթական ծառայությունների և ուսումնական գործընթացի գնահատման»: Քոլեջը մշակել է նաև «ՎՊԲՔ կրթության որակի ապահովման ռազմավարական պլան 2023-2028 թթ.», որում սահմանվել են ռազմավարական խնդիրներ, դրանց իրականացման համար համապատասխան գործողությունները, պատասխանատուները, կատարման ժամկետները, ակնկալվող արդյունքները: Ռազմավարական խնդիրների տիրույթում են որակի ապահովման մշակույթի տարածումը, որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ընդգրկվածության ընդլայնումը, որակի ապահովման ներքին համակարգի գործունեության արդյունավետության բարձրացումը, ՄԿԾ-ների որակի ապահովման մշտադիտարկման հստակ մեխանիզմների և գործիքակազմի մշակումը և ներդրումը, աջակցությունը քոլեջի գործունեության գնահատման առանցքային ցուցիչների մշակմանը, աջակցությունը որակի արտաքին գնահատմանը և հավատարմագրմանը:

2022 թվականից քոլեջում նշանակվել են ՈԱ ոլորտում աշխատանքային փորձ ունեցող 2 Կրթության որակի պատասխանատուներ (ԿՈՊ)՝ 0.25 դրույքով, որոնք իրենց աշխատանքներն իրականացնում են աշխատանքային պլանի համաձայն: Որակի պատասխանատուները վերապատրաստում են անցել Որակի ապահովման ազգային կենտրոնում (ՈԱԱԿ): ՈԱ աշխատակիցներին տրամադրվել է աշխատանքի համար սենյակ և հատկացվել է համակարգչային տեխնիկա: Որակի ապահովման գործընթացներին աջակցելու նպատակով քոլեջում ստեղծվել է Որակի ապահովման հանձնաժողով, անցկացվել է «Որակի ուսանող դեսպան» խորհրդի մրցույթը, որի արդյունքում խորհրդում ընտրվել է 17 ուսանող: Որակի ապահովման ոլորտում հանձնաժողովների անդամների աշխատանքների շրջանակը սահմանված է կանոնակարգերով, որոնք աշխատում են հասարակական կարգով, իսկ ԿՈՊ-երի գործառույթների շրջանակը սահմանված է պաշտոնի անձնագրով: ՈԱ պատասխանատուները ունեն գործունեության ինքնավարություն՝ պաշտոնի անձնագրով նշված տիրույթում և հաշվետու են տնօրենին: Կատարողականի համար հաշվետվություն է ներկայացվում հատուկ մշակված ձևաչափերով: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մինչև 2018 թ. ՎՊԲՔ-ն ունեցել է հաշվետվողականության վրա հիմնված ՈԱ համակարգ, 2018 թ. մշակվել է արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության կարգը, սակայն այդ ուղղությամբ որևէ աշխատանք չի իրականացվել: ՈԱ համակարգը հիմնովին վերափոխվել է 2022 թ., երբ ընդունվել են այլ կարգեր և դրանց համապատասխան աշխատանքներ են կազմակերպվել (հարցումներ, ֆոկուս խմբեր և այլն): Այժմ ՎՊԲՔ-ի ՈԱ համակարգն ունի հետևյալ կառուցվածքը՝ Կառավարման խորհուրդ -տնօրեն- Կրթության որակի պատասխանատու - ՈԱ հանձնաժողով - Որակի դեսպաններ: ՈԱ հանձնաժողովներում ներքին և արտաքին շահակիցների՝ ՎՊԲՔ վարչական աշխատակիցներ, դասախոսներ, ուսանողներ, գործատուներ, ծնողներ ներգրավածությունը ապահովում է նրանց մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում:

2022-2023 թթ. ընթացքում անցկացվել են հետևյալ հարցումները՝ «Դասավանդվող առարկաների բովանդակության և դասավանդման որակի գնահատում», «Ուսանողի կրթության որակի գնահատում գործատուների կողմից», «Կրթական ծառայությունների տրամադրման պայմանների գնահատում», «Քոլեջի բավարավածությունը հասարակական պատասխանատվությունից», «Շրջանավարտների բավարարվածությունը Վանաձորի պետական բժշկական քոլեջում ուսումնառությունից», «ՎՊԲՔ անձնակազմի և ուսանողների օտար լեզվի տիրապետման ուսումնասիրություն», «Կայացած միջազգային օնլայն կոնֆերանսից մասնակիցների բավարավածության», «Շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրություն», «Դասախոսը ուսանողների աչքերով»: Նշված հարցումների համար սահմանվել են հստակ նպատակներ, խնդիրներ և իրականացվել են համապատասխան վերլուծություններ ու եզրակացություններ:

Քոլեջի Որակի ապահովման քաղաքականության մեջ ներկայացված է համակարգի վերանայման ընթացակարգը: 2022 թ. վերանայվել է «Ուսանողների կրթական գործընթացից բավարարվածության կանոնակարգը» և մի շարք կանոնկարգեր, ինչպես նաև վերանայվել են հարցաշարերը: Քաղաքականության մեջ սահմանված են նաև

մշտադիտարկման և արդյունավետության գնահատման մեխանիզմները: Որակի ապահովման քաղաքականության և Որակի ապահովման ձեռնարկում մանրամասն ներկայացված է ՊԻԳԲ շրջափուլը և դրա կարևորությունը: Այդուհանդերձ, որակի ապահովման համակարգի և կիրառվող մեխանիզմների արդյունավետության գնահատում դեռևս չի իրականացվել: Որակի ապահովման համակարգի աշխատակիցները հիմքեր են ստեղծել արտաքին գնահատման համար: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի շրջանակներում ստեղծվել է ինքնավերլուծության խումբ, որի անդամները վերապատրաստում են անցել ԿՈՊ-երի և հրավիրված արտաքին փորձագետի շնորհիվ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ինքնավերլուծության խմբերի միջև եղել է չափանիշների և պարտականությունների հստակ բաժանում, ինչպես նաև ԻՎ իրականացումը նպաստել է քոլեջի ուժեղ և թույլ կողմերի բացահայտմանը: Այնուամենայնիվ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներկայացված ԻՎ-ն ոչ բոլոր չափանիշների մասով է պարունակում քոլեջի գործընթացների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն:

Քոլեջի ՈԱ գործընթացների թափանցիկությունը՝ կայքի բացակայության պայմաններում, ապահովվում է ֆեյսբուքյան էջով: Որակի ապահովման գործընթացները շահակիցներին հասանելի են դառնում նաև ընթացիկ նիստերի, հանդիպումների միջոցով: Հարցումների արդյունքները քննարկվում են մանկխորհրդի նիստերում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՎՊԲՔ-ն որակի ապահովման գործընթացները կանոնակարգելու նպատակով մշակել և ներդրել է քաղաքականություն և ընթացակարգեր, ինչպես նաև մշակել է Որակի Ձեռնարկ: Հատկանշական է, որ քոլեջը նաև կիրառում է փաստաթղթերով սահմանված դրույթները՝ նպաստելով որակի մշակույթի ձևավորմանը քոլեջում, ինչպես նաև ներքին ու արտաքին շահակիցների կայուն ներգրամանը որակի ապահովման գործընթացներում:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև այն, որ սուղ ֆինանսական ռեսուրսների պայմաններում քոլեջը յուրովի է լուծել մարդկային ռեսուրսներով ապահովվածության խնդիրը՝ որակի ապահովման երկու՝ 0,25 դրույքով աշխատող պատասխանատուներին օժանդակելու համար ստեղծվել է ՈԱ հանձնաժողով և Որակի ուսանող դեսպան խորհուրդը: Դասախոսների, ուսանողների և վարչական աշխատողների ներգրավումը լուծել է մարդկային ռեսուրսների պակասը, ինչպես նաև ապահովել ներքին և արտաքին շահակիցների ընդգրկվածությունը որակի ապահովման գործընթացներում: Դրան նպաստել է նաև ինստիտուցիոնալ կարողությունների հանձնախմբերով վերլուծությունը: Գովելի է, որ որակի պատասխանատուների և հանձնաժողովների առջև դրված խնդիրների և գործառույթների շրջանակները հստակեցված են:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ որակի ապահովման գործընթացները կարևորվում են քոլեջի ղեկավարության և աշխատակիցների կողմից, ինչպես նաև ստեղծվել է նպաստավոր միջավայր որակի ապահովման մշակույթի ձևավորման և քոլեջի ուսումնական գործընթացի բարելավման համար: Փորձագիտական խումբը դրական է համարում նաև, որ ՈԱ համակարգը թեև նոր է ներդրվում, բայց քաղաքականության մեջ ներդրվել են համակարգի գնահատման և վերանայման մեխանիզմներ, ինչը կնպաստի համակարգի հետագա բարելավմանը:

Փորձագիտական խմբի գնահատմամբ քոլեջը կարողացել է կարճ ժամանակահատվածում ապահովել բավարար հիմքեր արտաքին գնահատման համար։ Գովելի է, որ ՈԱ պատասխանատուները կարևորում են ԳԱՑ-երի համակարգի ներդրման և տվյալների բազայի ստեղծման անհրաժեշտությունը և այդ ուղղությամբ արդեն արվել են առաջին քայլերը։ Անցկացվել են մի շարք քանակական և որակական հետազոտություններ, որոնք սակայն դեռևս ամբողջապես համակարգված չեն։ Փորձագիտական խումբը գտնում է, որ տվյալների հավաքագրման գործընթացի համակարգումը, հստակեցումը, ինչպես նաև կիրառվող մեխանիզմների արդյունավետության գնահատումը հիմքեր կստեղծի քոլեջի բոլոր գործընթացների որակի ապահովման արդյունավետ մեխանիզմների և գործիքակազմի ապահովման համար՝ նպաստելով նաև համակարգի վերանայմանը և բարելավմանը։

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ կայքի բացակայության պայմաններում ՈԱ պատասխանատուները փորձում են այլընրանքային ճանապարհներով տարածել տեղեկատվությունը ՈԱ գործընթացների վերաբերյալ։ Հիմնականում դա իրականացվում է հաշվետվողականության ընդգրկուն մեխանիզմների, իրազեկման միջոցառումների, կլոր-սեղան քննարկումների, վերապատրաստումների կազմակերպման շնորհիվ, որոնք նպաստում են որակի ապահովման գործընթացների թափանցիկության ապահովմանը և շահակիցների շրջանում տեղեակատվության տարածմանը։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՎՊԲՔ-ն ներդրել է որակի ապահովման ներքին համակարգ, բարենպաստ պայմաններ է ստեղծել շահակիցների ընդգրկման համար, տրամադրել է աշխատանքի համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ, նպաստում է արտաքին գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրմանը, ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծում հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավման և որակի մշակույթի ձևավորման համար, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է Չափանիշ 10-ի պահանջները։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Վանաձորի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարարում է

Լիլիթ Զաքարյան
Փորձագիտական խմբի ղեկավար

12 հունվարի, 2024 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

1. **Լիլիթ Զաքարյան -** 1988 թ. ավարտել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարաժական ինստիտուտի պատմաաշխարհագրական ֆակուլտետում, ստանալով պատմություն և սովետական իրավունք ուսուցչի որակավորում: 1993 թ.-ին ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2008 թ.-ին՝ պատմության մասնագիտության դոցենտի գիտական կոչում: Գիտական հետազոտությունների շրջանակը ընդգրկում է Հայաստանում քաղաքական համակարգի փոխակերպումները, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի ձևավորման, կրթության համակարգի զարգացման պատմությունը: Դասավանդել է Հյուսիսային համալսարանում, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարաժական համալսարանում, Սլավոնական համալսարանում: Հյուսիսային համալսարանում եղել է Իրավաբանական և լրագրության դեպարտամենտի դեկան, Լրագրության և հասարակագիտական առարկաների ամբիոնի վարիչ, Ուսումնական վարչության պետ, հիմնադրել է և ղեկավարել Որակի ապահովման վարչությունը: 2015-2020 թթ. աշխատել է ՈԱԱԿ-ում: Այժմ աշխատում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող, Հայաստանի ազգային ագրարային համալսարանում ղեկավարում է Որակի գնահատման և ապահովման կենտրոնը:
2. **Մերի Սարգսյան** -1994-2000թթ. սովորել է Մխիթար Հերացու անվան Երևանի բժշկական համալսարանի բուժական ֆակուլտետում: 2007 թ.-ից մինչ այժմ աշխատում է Երևանի հենակետային բժշկական քոլեջում: 2016-2018 թթ. եղել է «Քույրական գործ» կրթական ծրագրի բաժնի վարիչ: 2021 թ.-ից մինչ այժմ տնօրենի տեղակալն է ուսումնական աշխատանքների գծով:
3. **Լիլիթ Աբելյան՝** 2009 թ. ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը: Ստացել է ուսուցչի, մանկավարժության բակալավրի աստիճան՝ «Պատմություն» մասնագիտությամբ: 2017 թ. ավարտել է նույն համալսարանը և ստացել մանկավարժության մագիստրոսի աստիճան՝ «Պատմություն» մասնագիտությամբ: 2016 թ.-ից Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոս է: 2020 թ.-ից մինչ այժմ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի պատասխանատուն է:
4. **Էդիտա Քասինյան՝** 2022թ.-ին ավարտել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջը՝ «Մենեջմենթ» մասնագիտությամբ: 2022թ.-ից սովորում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում՝ «Ագրոբիզնես և ֆինանսներ» մասնագիտությամբ: Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին, ինչպես նաև տարբեր դասընթացների և կամավորական աշխատանքների:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

31.10.23 թ. – 03.11.23 թ.

N.	31.10.2023 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Դասալսումներ	11:00	13:00	120 րոպե
2.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
3.	Հանդիպում տնօրենի հետ	14:20	15:10	50 րոպե
4.	Հանդիպում տնօրենի տեղակալների հետ	15:20	16:20	60 րոպե
5.	Հանդիպում գործատուների հետ	16:30	17:20	50 րոպե
6.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ	17:30	18:20	50 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:30	19:00	30 րոպե

N.	01.11.2023 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում Խորհրդի անդամների հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	10:30	11:10	40 րոպե
3.	Հանդիպում ամբիոնների վարիչների և բաժնի վարիչի հետ	11:20	12:20	60 րոպե
4.	Ռեսուրսների դիտարկում	12:30	13:30	60 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:40	14:40	60 րոպե
6.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 ներկայացուցիչ) հետ	14:50	15:50	60 րոպե
7.	Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ	16:00	16:50	50 րոպե
8.	Հանդիպում ՈՒԽ ներկայացուցիչների հետ	17:00	17:40	40 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:50	19:00	70 րոպե

N.	02.11.2023 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Զուգահեռ հանդիպում «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ» և «Բուժական	09:30	10:20	50 րոպե

	կասմետոլոգիա»մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ				
2.	Զուգահեռ հանդիպում «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ» մասնագիտության կրթական ծրագրերի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Բուժական կասմետոլոգիա» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	10:30	11:20	50 րոպե
3.	Զուգահեռ հանդիպում «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ» մասնագիտության կրթական ծրագրերի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Բուժական կասմետոլոգիա» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	11:30	12:20	50 րոպե
4.	Հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (ուս. մաս, պրակտիկայի ղեկավար, կարիերայի ուղղորդման պատասխանատու, մեթոդիստ, կաբինետ լաբորատորիաների վարիչներ, լաբորանտ) ղեկավարների հետ		12:30	13:20	50 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ		13:30	14:30	60րոպե
6.	Հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (հաշվապահ, կադրերի տեսուչ, գրադարանավար, արխիվավար, բուժքույր, տնօրենի օգնական) ղեկավարների հետ		14:40	15:20	40 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում		15:30	18:30	180 րոպե

N.	03.11.2023 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում Որակի ապահովման պատասխանատուի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Բաց հանդիպում	10:40	11:20	40 րոպե
3.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	11:30	12:20	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
5.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի քննարկում	13:40	15:30	110 րոպե
6.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	15:40	16:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Արտաքին և ներքին շահակիցների կարքիների վերլուծությունների, գնահատումների օրինակներ	1
2.	Պաշտոնի անձնագրեր	2
3.	Աշխատաշուկայի ուսումնասիրության վերաբերյալ տեղեկատվություն	2
4.	Ղեկավար կազմի վերջին երեք տարիների աշխատանքային պլաններ և հաշվետվություններ	2
5.	Մանկխորհի արձանագրություններ	2
6.	Ուսումնակազմակերպչական աշխատանքների, լրատվության և հասարակության հետ կապերի պատասխանատուի տարեկան պլաններ, հաշվետվություններ	2
7.	Բոլոր ստորաբաժանումների տարեկան աշխատանքային պլաններ և հաշվետվություններ /վերջին 5 տարիների/	2
8.	Կառավարման խորհրդի նիստի արձանագրություններ /վերջին 5 նիստերի/	2
9.	Գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ	2
10.	Ընտրովի առարկաների մոդուլային ծրագրերը	3
11.	Դասախոսների փաթերթներ /3 ՄԿԾ/	3
12.	Հանձնարարականների, ռեֆերատների, օրինակներ, ունումնառության նյութերի օրինակներ	3
13.	Մատյաններ	3
14.	Դասալսման վերլուծությունների օրինակներ	3
15.	Ուսանողների կողմից կրթական ծառայությունների և ուսումնական գործընթացի գնահատման վերլուծություններ	4
16.	Ընդունելության քննության գնահատման չափանիշներ	4
17.	Շրջանավարտների բազա	4
18.	Դիմորդների ընդունելության գորընթացի արձանագրություններ	4
19.	Կարիերայի կենտրոնի վերլուծություններ շրջանավարտների աշխատանքի տեղավորման հետ կապված	4
20.	ՄԿՈՒԶԱԿԻ մշտադիտարկման արդյունքների արձանագրություն /փաստեր/	5
21.	Դասախոսներ վերապատրաստման փաթեթներ	5
22.	Դասալսումների մատյան	5
23.	Վերջին երեք տարվա ընթացքում մեթոդական կամ մասնագիտական վերապատրաստում անցած դասախոսների անվանացանկ	5

24.	Պրակտիկայի օրագրերի լրացված օրինակներ	6
25.	Պրակտիկայի ծրագրեր	6
26.	Պարբերականների, զեկույցների, հոդվածների, օրինակներ	6
27.	Ուսանողների հետազոտական, գործնական, ինքնուրույն աշխատանքների օրինակներ	6
28.	Համագործակցությունների համաձայնագրեր և հուշագրեր /պայմանագրեր/	9
29.	Արձանագրություններ որակի ձեռնարկի, քաղաքականության և նպատակների սահմանման վերաբերյալ քննարկումների մասին	10
30.	Վերհանված կարիքների վերլուծություններ, համապատասխան փաստաթղթեր	10
31.	Հարցումների լրացված օրինակներ, արդյունքների վերլուծություններ	10
32.	Հավաքագրված տվյալների բազա	10
33.	ՈԱ առցանց ռեսուրսային շտեմարան	10
34.	Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր	10
35.	Կանոնակարգ ուսանողների կողմից կրթական ծառայությունների և ուսումնական գործընթացի գնահատման	10
36.	Կրթության որակի ներքին ապահովման ՌԾ 2023-2028 թթ.	10
37.	ԿՈՊ տարեկան հաշվետվություն 2022	10
38.	Կրթության ՈՆԱ աշխատանքային պլան/կատարողական	10
39.	Կրթության ՈՆԱ աշխատանքային պլան/հաշվետվություն 2023	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Լսարաններ,
- համակարգչային լսարաններ,
- մարզադահլիճ,
- մասնագիտական լաբորատորիաներ,
- «Ընտանեկան բժշկության կենտրոն» (համաբուժարան),
- գրադարան,
- արխիվ,
- ընթերցասրահ։

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՎՊԲՔ - Վանաձորի պետական բժշկական քոլեջ

ԿԳՄՍ նախարարություն - Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՄԿԾ - մասնագիտության կրթական ծրագիր

ՄԿՈՒ - Մասնագիտական կրթություն և ուսուցում

ՄՈՒՀ - մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ - որակի ապահովում

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱՇ - որակավորումների ազգային շրջանակ

ՊԿՉ - պետական կրթական չափորոշիչ

ՌԾ - ռազմավարական ծրագիր

ՈՒԽ - ուսանողական խորհուրդ

ՈՒՕ կազմ -ուսումնաօժանդակ կազմ